

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

54^{րդ} ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ

թիվ 11

13 ՄԱՐՏ 1904

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քենիսըն եւ ալթրէս քը Միւսէ (Բ. եւ վերջին մաս) ԵՐՈՒԱՆԴ ՄԷՍԻԱՆԱՆ :— Ապաւաւ (Կրօնային փերքուած) ԵՂԻՇԷ ՎԱՐԴԱՊԵՏ :— Վառարանիս անկիւնէն. ՄԵՆԱՍԷՐ :— Գեպի ուր (Բանաստեղծութիւն) ԷՏՄՕՆ ՀՍՐԹԲՈՒՐ. քարգմ. ՉԻՖԹԷ-ՍԱՐԱՖ :— Կանացի վեճ (Նորավիպ) ՓԱՅԼԱԿԻ եւ Ա. ՉՐԱՔԵԱՆ :— Հաբոնական քաւրոն մը. X :— Նորերու բաժինը. «Իրիկնամուս» ԷՏԼՎԱՅՍ :— «Վերջին աղնարկը». ՊԱՐԷՏ :— Պոլսահայ ամուսնութիւններ — Սարգիս աղային նշանակումը. Շ. ՇԱԽԱՐՇ :— Քաղաքական աշխարհ :

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաբերքի տարեկան բաժանորդագինն է 4. Պոլսոյ համար Բաւսուն դր. եւ գաւառներուն համար յիսուն դր., կանխիկ վճարելի : Արտասահման՝ 12 Ֆրանկ կամ 5 րուպի : Թղթատարական ծախքը տարագրութեան վրայ է : Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր : Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկին : ՄԱՍԻՍ հրատարակ կ'ելլէ ամէն շաբաթ առտու : Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած են, պէճ է իսկոյն իմացնեն տարագրութեան : Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առարկութիւնները նկատողութեան չեն առնուիր :

Ձեռնարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր :

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշտի պայմաններով :

Ձեռն-ԲԷ ԿՐ ՇԱԽՈՒԻ ՀԱՏՔ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

در علیاده غلطه ده (ماسيس) غرضى اداره سى

ԻՄԲՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Հալաքիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵԱՆՔԻ ԴԷՍ

Ապահովագրական այս ընկերութիւնը, որ հաստատուած է ու կը գործէ Ֆրանս. կառավարութեան ֆոնդոյին ներքեւ, երայխաւորեալ դրամադուխ ունի՝ հրդեհի ճիւղին համար 56,000,000 ֆր. եւ կեանքի ճիւղին համար 36,000,000 ֆր.:

ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ մէկն է Եւրոպայի ամէնէն պատուաւոր եւ ամէնէն վստահելի ապահովագրական մեծ ընկերութիւններէն, եւ ուր որ մասնաճիւղ հաստատուած է՝ միշտ գոյժգած է իր բոլոր յաճախորդները, իր կատարեալ ուղղամտութեամբը եւ կանոնաւոր գործառնութիւններով:

Այս վաղեմի ընկերութիւնը մեծ վարկ կը վայելէ ամէն կողմ. եւ իր գործառնութեան ու վստահելիութեան վրայ գաղափար մը տալու համար թուենք մէկ քանին այն հանրածանօթ հաստատութիւններէն, որոնք ապահովագրուած են ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍի:

Ֆրանսայի նահանգներու եւ գաւառներու կարգ մը պաշտօնատուներէն զատ, Բարիդի՝ Օրէրա. Վօսվիլ, Նուվօթէ. Ամպիկիւ, Ֆօլի-Տրամաթիք եւ այլն թատրոնները, նաեւ Պօստոյի, Թուլուզի, Հիոնի, Մարսիլիայի, Նանդի, Նիսի, Ալճէրիոյ, Բուէնի, եւ ուրի տեղերու մեծ թատրոնները:

Պօն Մարչէն, Լուվրի վաճառատուները, Բիկմայիոնը, Բրէնթանի, Պէլ-Ժառտիսիւնի Օթէլ, ալ Լիլի եւ Սամարիթէնի մեծ վաճառանոցները:

Թրանսաթլանթիք. Հովր-Մարսիլիա նաւարկութեան, Մովայիւն Փոխադրութեանց, Ֆրանսական Թրամուէյներու, ինայողական երկաթուղիի ընկերութիւնները:

Մասնաւորապէս ուշադրութեան առնուելիք պարագայ մըն է որ ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ ընկերութիւնը, իր կազմական կանոնադրին համաձայն, պարտաւոր է ամէն վեց ամիսը անգամ մը իր ելմական կացութիւնը ենթարկել Ֆրանսայի Առեւտրական Նախարարութեան քննութեանը. նոյնպէս Սէնի քաղաքապետութեան, Բարիդի Առեւտրական Սենեակին եւ այլն: Ընկերութեան դրամատունն է Բրէտի Լիօնէն:

Սոյն ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը ստանձնած է մեր հրապարակին վրայ իր պատուաւորութեամբը ծանօթ:

ԳԱՌՆԻԿ ԱՃԱՌԵԱՆ

Որուն պէտք է դիմել՝ թէ՛ հրդեհի եւ թէ՛ կեանքի ճիւղին վերաբերեալ ապահովագրութեանց կամ տեղեկութեանց համար: Գ. Աճառեան կը վարէ նոյնպէս Compagnie d'Assurances générales Maritimes ծովային ապահովագր ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը:

Հաւցե. — Պօլիս, Մահմուտ փաշա, Պէօյիւք Երլտըզ խան, Թիւ 14, Լա Գօնֆիանս ապահովագր. ընկ. Դրասենեակը:

Դառնիկ Աճառեան կը վարէ նաեւ իր անձնական սեփականութիւնը եղող անբիւրեւ վաճառատուն, մի Պօլիս, Շուկայ, Հաֆաֆար, Թիւ 46, ուր գաւառներէն առուծախի յանձնարարութիւններ կ'ընդունուին:

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՍՅ ԱՊԱՀՈՎՈՐԱԿԱՆ ԸՆԿ
ZAKUSSTUL Ի ԲԱՐԻՉ 1828-1829

ՀՐԴԵՀԻ ԶԻՒՂ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	274,000,000	Ֆր.
1902ին գանձուած ապահովագիրն	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

ԿԵՆՍՅ ԶԻՒՂ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	129,000,000	Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագիրն	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ՉԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՉ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեալ զինեալ: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի ապահովագրուողք ՉԵՐՄ են այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բարդման (accumulation des bénéfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրսեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԲԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելի Տնօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համամ, Բասաթ Բաքրէնք Օղլու

Մասնաճիւղ՝ Ղալաթիա, Լոնայէթ Խան: Գործակալութիւնք Թուրքիոյ զլխաւոր քաղաքաց մէջ



ՅՈՎԱԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵՂՐՈՒՆԻ)

ԱՏԱՄՆԱՐՈՅԺ

Մուգաֆէրիէ Հիւանդանոցին եւ

Պարսկական Դեսպանատան

Բերա, Մեծ Փողոց, Թագսիմ, քիւ 61

Չրանեան արաւոքման

Պալապեան ամէն օր ահուայի ամէն տե.

ուակ հիւանդութիւններով տառապողներ, կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Երեքշաբթի մինչեւ ժամը 5: Գիշերուան օր եւ է ժամուն կարելի է դիմել: Պալապեան կ'ե. բոլորաւորէ իր լեցուցած ու լինած ահու. ներք: Ճիւղերը ահուայ քաշել տալու հա. մար, որոշ վարձք մը կ'կայ: քաշել տուողին կամքէն կ'ախալ է:

Աղբաւանդուն ձրի

ԱՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ



Եթէ կ'ուզէք ամէն տե. սակ գոհարեղէններ ունե. նալ, աժան ու ճաշակաւոր, թէ՛ արե՛ հիւան եւ թէ՛ եւրոպական ճաշակով պատրաստուած, ժամա. ցոյցներ, արծաթեայ զաւաղաններ եւայն, դիմե. ցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շու. կան, Մեծ-փողոց, Թիւ 13:

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար 100ին 5 շաբաթական վճարում: Կանխիկ գնողին համար հարիւրին 5 զեղչ: Գործածուած գոհարեղէնները եթէ վնասուած չեն՝ 100ին 10 զեղչով եւ կ'առնուին. իսկ ապառիկ գը. նողներէն՝ 100ին 15 զեղչով:

ԺԻՒՐԱԿԱՆ ԱՌՏԻ ԳԵՄ ՆԱԽԱԶԳՈՒՂՈՒԹԻՈՒՆ

Ծիրական ախտի դէմ նախադրուածեան միայն ճամբայ մը կայ. այն է մարմնը միշտ կենսական զօրութեամբ պահել որնոր դրութեան կենսական զօրութիւնն, առողջութիւնն և դիմացողան դժ տալով կրնայ ըլլալ:



SCOTT'S EMULSION

աշխարհիս մէջ ամենալաւ “ուտելիք—դեղ” է. որ շուտմը առողջութիւնը կը վերականգնէ և երակներու մէջ նոր հարուստ արիւն կը տարածէ:

Եթէ կազմութիւնը կատարեալ առողջութեան մէջ չէ և ընթացի առաջին նշանները երևան կ'ըլլեն. ինչպէս տեղական գունատութիւն, թեթեւ սակայն թելածար հազ, քիչերները սաստկացող բարեխառնութիւն և ախորժակի կորուստ ևն. ժամանակ վատնելու չէ, մէկէն Ըսգոթի Բաղադրութիւնն առնելու է. միակ դեղն է որ կրնայ մարդս առողջութեան և զօրութեան վերականգնել և այս եղելութիւնը գործնականապէս կը տեսնուի վասնզի հազարաւորներ տեսածն և կը տեսնեն:

ԸՍԳՕԹԻ ԲԱԳԼԴՐՈՒԹԻՈՒՆ

կատարելապէս անուշահամ է. ախորժակը կենդանացունէ, և մարսողութիւնը կ'աճապարէ: Հիւանդութեան սերմը կը մեռցրնէ և շուտմը մարմնը կը զաւայէ: Ըսգոթի Բաղադրութիւնն ընդմիշտ այս տեսնուած նշանով վարդապոյն փաթեթի մը մէջ կը գտնուի:

Չիշերու վրայ ասոր ուշադրութիւնը ընել պէտք է:

Բոլոր բեղաճեղմները և բեղաճեղմները և ծիւղ:

ՅԱՄԱՔԱՅԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՊԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԸ

ՎԻՔԹՈՐԻԱ ՏՇ ՊԵՐԼԷՆ ԱՊԱՆՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՄԷՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԿԸ ԳՈՐԾԱԳԻՆ

Ունի կեանքի, օժիտի, արկածի, ցմահ թուակի նիւղեր

VICTORIA
DE
BERLIN

ՎԻՔԹՈՐԻԱ ՏՇ ՊԵՐԼԷՆ կեանքի ապահովագրութիւններ ունի թէ բժշկական քննութեամբ եւ թէ առանց բժշկական քննութեան Առանց բժշկական քննութեան եղած կեանքի ապահովագրութիւններ. բուն վճարումները շաբաթական մասնավճարներով տեղի կունենան, սկսեալ 5 զրուչէն

Ապահովագրեալ գումար 1902ին Ֆր. 1,244,457,577
Պահեստի դրամ 1902ին » 451,284,214

Հաստատուած 1853 սեպտ. 21ին արեւմտեան իտալական իւրաքանչիւր եւ ուղղակի կառավարութեան հսկողութեան ներքին:

ԸՆԿ. ԴՐՄԱՏՈՒՆՆԵՐԸ

Օսմ. Կայս. Պանքա
եւ Քրէտի Լիոնէ

Լիազօր Ընդհ. Ներկայացուցիչ
ՄԻՀՐԱՆ ՍԻՆԷՄ ԳԱԼՖԱՅԵԱՆ

Տեսուչ,
ՅԱՐՈՒԹԻՒՆ Մ. ՔԵՉԵՃԵԱՆ

Պոլիս Բաքրեքոյլու խան,
քիւ 45 եւ 45 հ.

ՄԱՍԻՆ

54րդ. ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 11

13 ՄԱՐՏ 1904

ԹԵՆԻՍԸՆ ԵՒ ԱԼՖՐԵՏ ՏԸ ՄԻՒՍԷ^(*)

(Էջ ՄԸ ԹԵՆԻ "ԱՆԳԼ. ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, ԷՆ")

Միւսէ խոյացաւ կեանքի մէջէն, եռանդուն ձիւ մը պէս որ կ'արշաւէ դաշտին մէջ, և զոր կը մղեն տունկերու բոյրը ու շողշողուն նորութիւնը ընդարձակ երկինքին, կուրծք տուած իր խօլ արշաւին մէջ որ ինքզինքն ու ամէն բան փչրէ իր առջև: Խիստ շատ բաղձաց. ուղեց մէկ ումպով բոլորովին ճաշակել կեանքը զօրաւոր ու անյագ կերպով. չճաշակեց, չքաղեց իսկ գայն, բլբլեց խաղողի ողկոյզի մը պէս, ճգմեց, քամեց ու կը կանգնի անուշոտ ձեռքերով, առաջուան չափ ծարաւի: Ետքը՝ հեծկլտանք արձակեց որ արձագանդ գտաւ ամէն սրտերու մէջ. ի՞նչ, այսքան երիտասարդ և արդէն ա՛յնքան յոգնած. ա՛յսչափ թանկագին տաղանդ, նուրը միտք, այսքան փափուկ վարուելակերպ, այսքան հարուստ ու թոխ առնող երեւակայութիւն, նախազգոյշ փառք մը, այսքան յանկարծական. բողբոջում մը գեղեցկութեան և հանճարի, և տակաւին, ձանձրոյթ, զգուսնք, արցունք, աղաղակ! Ի՛նչ խառնուրդ. ան՝ նոյն դիրքին մէջ կը պաշտէ ու կ'անիծէ: Յաւէրժական պատրանք. անյաղթելի փորձառութիւն, քով քովի կը մաքառին իր մէջ և զինք կը բլբլեն:

Միւսէ ծերացաւ, բայց երիտասարդ մնաց. բանաստեղծ մըն է ան, և սկեպտիկ մը: Մուսան և իր խաղաղալից գեղեցկութիւնը, Բնութիւնը և իր անմահ թարմութիւնը, Սէրը և իր երջանիկ ժպիտը, բոլոր հոյլը աստուածային տեսիլքներու մերկ անցան աչքին առ-

ջեւէն, երբ՝ անէծքով ու հեղնութեամբ՝ իրեն մօտեցան մահուան ու մոլութեան բոլոր ոգիները: Խնճոյքի մէջ նստած մարդ մըն է ինք որ կը լսմէ առջեւը կեցած քանդակադարձ բաժակէ մը, ծափերու և յաղթական երաժշտութեան մէջտեղ, ժպտուն աչքերով, սիրտը լեցուն ցնծութեամբ, տաքցած ու գրգռուած իր կուրծքէն վար սահող զինիով, մարդ մը որ հեռոջնատէ տժգոյն կը դառնայ. թո՛յն կար գաւաթին մէջ, կի՛նայ ու մահուան ճիւղ հագագին մէջն է:

Ջլապինդ ոտքը կը տրոփէ մետաքս կապերաւ, և բոլոր հիւրերը սարսափած իրեն կը նային: Ահա ինչ որ զգացինք այն օրը երբ մեր է՛ն սիրելի, է՛ն փայլուն բանաստեղծը յանկարծ գետին դարձուեցաւ մահուան ճիւղ իր հագագին մէջ, մեր խնճոյքին թափուր մնացած շքեղութիւններուն և զուարթութիւններուն ընդմէջ:

Ի՛նչ, յաւէտ կը սիրենք զինքը ինչպէս որ էր. ուրիշի չենք կրնար մտիկ ընել, իր քով ամէնքն ալ պաղ ու սուտ կ'երեւին, կէս գիշերին կը թողունք թատրոնն ուր Moli-branը մտիկ ըրած էր և կը մտնենք մթին Ռիւ տէ Մուլէնը ուր, վարձուած անկողինի մը վրայ, իր Rollan հկաւ քնանալ ու մեռնիլ, ձրագները մարմորդ ճառագայթներ կը նետեն սահուն տախտակամածին վրայ, անհանդարտ շուքեր կ'ընթանան, կ'անցնին դուռնէն, ետեւումն քաշելով մետքսէ հագուստին, հանդիպելով անցորդներուն:

Գոց են պատուհանները, չող մը կը ճեղքէ

(*) Ետ. եւ վերջ:

կիսափակ փեղկը հոս հոն, ու կը ցուցնէ թոռմած տանիքա մը պատուհանին եզերքը:

Այս խեղճուկ տեղէն ահա եկաւ իր ոտա-
նաւորներուն է'ն ցամաքը: Այս անարդու-
թիւնները, ստորնութիւնները բնակավայրին,
հոսեցուցին այս աստուածային պերճախօսու-
թիւնը, ասոնք էին որ ասա'նի վայրկեանի
մը, ճմլուած այս սրտին մէջ ժողովեցին բնու-
թեան ու պատմութեան բոլոր շքեղութիւն-
ները որպէս զի փափկուն չողիւններով ցայ-
տեյնեն զանոնք ու նշուարձակ վառեն ա-
մէնէն աւելի բանաստեղծական ու բոցավառ
արեւի մը տակ որ երբեք ծագած է:

Կը գլթանք. կը մտածենք միւս բանաս-
տեղծին, հունա՛, Ուայթ կղզին, որ կը զբօս
նու կորսուած զիւցաղներգութիւններ հագ-
ուեցնելով: Ինչքա՛ն երջանիկ է ան իր ըն-
տիր գերեքերուն, իր բարեկամներուն, այծ-
տերեւիներուն ու վարդերուն մէջտեղ: Հոգ
չէ: Միւսէ նոյնիսկ հոս, այս աղբի ու թըշ-
ուառութեան մէջ աւելի բարձրացաւ: Ինչպէս
մենք կը տեսնենք ծովը հողմակոծ բարձրա-
ւանդակէ մը, իր անյուսութեանն ու տա-
րակոյսին կատարէն, բանաստեղծը անհունը
տեսաւ: Կրօնները, անոնց փառքն ու ան-
կումը, մարդկային ցեղը, իր վիշտերն ու
ճակատագիրը, ամէն ինչ որ վսեմ է աշխարհի
մէջ, իրեն երեւցան հոն՝ փայլակի ցոլորի մը
մէջ: Գոնէ այս անգամ ան իր կեանքին մէջ
զգաց խորունկ զգացողութեան մը ներքին
փոթորիկը, հսկայ երազներ, անբաւ հեշտու-
թիւն, որուն բաղձանքը ապրելու անկարող
դարձուց զինք և որուն պակասը՝ իր մահը
ստիպեց: Ա՛լ գեղարուեստասէր չէր. դո՛ն չէր
զգար ինքզինքը վայելելով ու ճաշակելով.
իր հետքը մարդկային խորհուրդի վրայ թո-
ղուց, պատմեց աշխարհին թէ ի՛նչ են մարդ,
սէր, ճշմարտութիւն, երջանկութիւն: Տա-
ռապեցաւ, բայց՝ գիւտ ունեցաւ, նուազեցաւ
բայց արտադրեց: Իր աղիքներէն զատեց
յուսահատութեամբ, այն գաղափարը զոր
ըմբռնած էր ու ամէնուն աչքին ցոյց տուաւ,
վշտալի այլ կենդանի: Ատիկա աւելի
դժուարին, աւելի սիրուն է քան ուրիշներու
գաղափարներուն նային ու հիանալը:

Այն մարդերը որ Թէնիսընի մտիկ ըրին
աւելի աղէկ են քան Ճրանսայի ամբոխն ու
Պօնեմները, բայց ես կը նախընտրեմ Թէնի-
սընի Ալֆրէտ տը Միւսէն:

ԵՐՈՒԱՆԴ ՄԷՍԻԱԵԱՆ

ԴՐԱՅԱՐԱՍԷՐ ՆԵՐՈՒՆ

Վերջին տարիներս Մառիսի մէջ գրաբար
նուիրուած բաժինը, զոր ձեռնհաս աշխա-
տակից էր կը մշակէ՝ օտար քերթուածներու
թարգմանութեամբ, արժանաւորապէս զնա-
հասուած ըլլալով մեր գրասէր ընթերցող-
ներուն կողմէ, յաջորդ թիւով պիտի հրա-
տարակենք հատընտիր արձակ մը — Գ. ԶՈՒ-
ՐԱՊԻ ԶԻՏԻՄ ԱՎԱՐՏԻՆ Նորավէպին գրաբար
թարգմանութիւնը զոր կատարած է Դոյնպէտ
ՏԻԳՐԱՆ ԵԼԻՔԵՆՃԵԱՆ:

ՎԱՌԱՐԱՆԻՍ ԱՆԿԻՒՆԷՆ

ԲԵՐԱ, 9 Մարտ 1904

Երեւոյթի

Առաջին ձիւնը՝ գարնանամուտին, — այս
առաւ, — ողջունեցինք Պոլսոյ մէջ, երբ կը
պոտորաստուէինք ողջունել առաջին ծաղիկ-
ներուն բացուիլը: Բարեբաղդաբար, տեսա-
կան չեղաւ ո՛չ ալ թանձր՝ տանիքներն ու
գետինը ծածկելու աստիճան: Նուրբ, ձեր-
մակ հատիկներու անկում մը, հեղնութեան
մը՝ կատակի մը պէս զոր քնութիւնը ուղեց
ընել. ու նորէն զաղջ արեւը որ կը զգացնէ
թէ հեռացած ենք ձմեռէն: Բանաստեղծնե-
րուն համար ի՛նչ նոր նիւթ մը պիտի
հայթայթէր այս երեւոյթը, եթէ ուղէին
նկարագրել զայն ու խոհեր հիւսել անոր
վրայ, թողլով յաւիտենական նիւթերը մեր-
ժուած սէրերու, հոգեկան տառապանքի, ու-
րոնցմով կը տառապեցնեն իրենց գրիչը:
«Նորերու Բաժին»-ի մը բացումը, Մասիսի
մէջ, ջերմ համակրութիւն մը պատճառած
ըլլալ կ'երեւայ երիտասարդներուն, որչափ
որ կը հետեւցնեմ լսած խօսակցութիւններէս:

բայց անշուշտ այս պարագան ենթադրել
չպիտի տայ թէ հանդիպող աղան կամ աղ-
ջիկը որ քանի մը քառեակ կ'ուրուագծէ,
աններդաշնակ յանգերով, սխալ չափերով,
իր գրածը հրատարակուած տեսնելու իրա-
ւունքը պիտի ունենայ. և արդէն, հրատա-
րակուածներէն դատելով, խնամոտ ընտրու-
թիւն մը կը կատարուի: Այդ ոտանուորները
զլուխ—գործոցներ չեն, զիտենք, բայց
ոչնչութիւններ ալ պէտք չէ ըլլան. կա՛մ
արտաքին ձեւը կամ նիւթը ու իմաստը ար-
ժէք մը ունենալու են: Լաւագոյն է որ
սկսնակները՝ ափ յափոյ բան մը զրել զրկե-
լու տեղ, խնամեն, սրբագրեն, իրենք հա-
նին նախ՝ խմբագրութեանդ ու ընթերցող-
ներուն հաւնեցնելու համար. արարուան շըր-
ջանին վերջը, լուրջ ու սուսնասիրութեան մը
առարկայ կրնայ ըլլալ «Նորերու Բաժին»ը,
անոր մէջէն մատնանշուելով համեմատա-
բար ընտրելագոյն բանաստեղծութեանց հե-
ղինակները որոնք ապագայ կը խօստանան:

Այս տեսակ ուսումնասիրութիւն մը գոնէ
զերծ պիտի ըլլար այն փոթորիկներէն որոնց
բռնուեցաւ 1903ի Գրական Տեսութիւնը,
որուն վերջին արձագանգները դեռ կը լսուին
շաբաթաթերթերու մէջ: Ինչո՞ր գրուեցան,
ինչո՞ր ըսուեցան այդ տարեկան Քրօնիկին
չուրջը, գրական վէճի մը ու մինչև իսկ
լրագրական բարեկրթութեան պայմանները
ոտնակոխ ըլլուելով: Կարգ մը գրողներու
համար՝ այդ յօդուածը պարզապէս պատրուակ
մը եղաւ յագեցնելու ինչ դառնութիւն որ
ունէին Մասիսի խմբագրութեան դէմ. որ
սակայն աղէկ մը չեղտեց ու մերկապարանոց
մէջտեղ դրաւ այդ գրչի յարձակումներուն
բուն շարժառիթը: Եւ անգամ մըն ալ տես-
նուեցաւ որ, ցոյց տրուած նախանձամիտգրու-
թեան տակ՝ նախանձոտութիւններ գոհացում
կը փնտռէին:

Մասիսի խմբագրութեան պէս՝ ես ալ
չեմ ուզեր ծանրանալ մրցակից թերթի մը
յարուցած այս սին վէճին վրայ որ ագեղ
յայտնութիւններու դուռ պիտի բանար:

* *

Արդէն, գեղեցիկ նիւթերը չեն որ կը

պակսին վերջին եօթնեակին մէջ, անոնցմէ
առաջինն ըլլալով Հիւանդանոցին Նուագա-
հանդէսը,—առանց մոռնալու 1500 ոսկիի
կտակը կամ նուէրը զոր ծանօթ ազգային մը
կ'ընէ Խասդիւղի Ներսէսեան վարժարանին
վերաջինութեան համար: Մենասէր մը ըլ-
լալս՝ արգելք մը չէր որ չի փութայի երթալ
մեր բարեգործական—երաժշտական ցերե-
կոյթին: Թեյիէ—Պաշրի թատերասահին
տեսքը միայն բաւական էր անխառն գոհու-
նակութիւն մը առթելու ներս մտնողին.
ամէնէն չքեղ soiree de galaներու երեւոյթը
իսկ կը գերազանցէր օթեակներուն ու սրա-
հին բազմութիւնը, որուն մէջ գեղեցիկ սեռը
կը կազմէր մեծամասնութիւնը կամ գէթ
այդ պատրանքը կուտային շնորհալի տիկին-
ներու և օրիորդներու ճոխ, ճաշակաւոր ու
գրաւիչ արդուղարդերը որոնք կը պարզուէին
ամէն կողմ: Անուններու յիշատակութիւն մը
միշտ froissementներ կրնայ պատճառել
չլիշուածներուն, մոռցուողներուն. կը բաւէ
ըսել թէ, ամէն անոնք որ անուն մը ունին
ազգին մէջ՝ իբրեւ պետական պաշտօնատար,
սեղանաւոր, վաճառական, հասառու, մեծ
հաստատութեանց վարիչ կամ գլխաւոր պաշ-
տօնեայ, փաստաբան, բժիշկ, գրագէտ,
լրագրագետ, հո'ն էին, և ամէնէն ծանօթ
ընտանիքներն, ինչպէս նաև ժողովրդային
ընտրեալ բազմութիւն մը երկու սեռէ:

Որոշուած ժամին, Կայս. Համիտիէ քայ-
լերգը հնչեցուց Պ. Նավայի նուագախումբը
և որուն ջերմապէս ծափահարեցին բոլոր
հանդիսականները՝ ոտքի վրայ կեցած: Նուա-
գահանդէսը բացուած էր: Ու խոր, երկիւ-
ղած լուութեան մը մէջտեղ սկսան նուագ-
ուիլ յայտագրին մէջ նշանակուած երաժշ-
տական հատուածները զորս մէկիկ մէկիկ
յիշելու ժամանակը անցած է՝ քանի որ օրա-
թերթերը յաջորդ օրն իսկ հրատարակեցին
մանրամասն նկարագրութիւնը: Ընդհանուր
կերպով, տպաւորութիւնը լաւ էր. եւրոպա-
կան երաժշտութեան վարժ եղողները, հաս-
կըցողները, ու քիչ անգամ դայն լսելու ա-
ռիթ ունեցողները հաւասարապէս ազդուած
կերեւային, մերթ դաշն ու մեղմօրօր՝ մերթ

անազնադղորդ նուագաժութեան ելեւէջող արձագանգներուն հետ խառնուած դգալով կարծես արձագանգներն ալ այն սրտաշարժ բաներուն որոնք կ'ըսուին Հիւանդանոցին դժբաղդ պատասպարեալներուն ի նպաստ :

Պ. Նալայի նուագախումբը նոյնքան ծանօթ՝ որքան գնահատուած է արդէն Բերայի մէջ. իբր օտար արուեստագէտ, բոլորովին նորութիւն մըն էր Հունդարայի Պ. Կէղա Քօլքէր որ իր հովուական ուրր սրինգովը այնքան ներգաշակ խզանակներ հնչեցուց : Հայ արուեստասէրներէն ունկնդրեցինք Օր. Է. Սթամպօլլեանի՝ որ դաշնակի վրայ զարկաւ Լիւթի մեծ ու դժուարին մէկ ֆանթէզին, և Պ. Վ. Պօյաճեանի որ կրկին անգամ բեմ գալով՝ դաշնակի ընկերակցութեամբ երգեց իտալերէն երգեր Վէշտիէ ու Մաճիէ, երկուքն ալ ջերմապին ու քաջալերական ծափահարութեանց մէջտեղ վերջացնելով իրենց ստեղծնաչարին ու ձայնին վերջին նօթերը :

Ժամ 10ին, երբ Պէրլիօղի Հունդարական Մառչը կը փակէր Նուագահանդէսը, դժուարակութիւն մը կ'ընդնշմարուէր հանդիսականներու դէմքին վրայ՝ թէ ինչո՞ւ այսքան շուտ թողուլ այն հեշտ մթնոլորտը որ տարին մէկ անգամ կը կազմուի, համակիր ընկերակցութիւնները ու գեղեցիկ երաժշտութիւնը :

Ինչ որ գրած էիք Մաքսի նախընթաց թիւին խմբագրականով՝ կարգադիր Մասնախումբի անդամներուն նուիրած հոգածութեանն ու աշխատութեանը համար՝ լիովին ի յայտ եկան մարտ 7ի կիրակին, Նուագահանդէսին ճաշակաւոր կազմակերպութեամբն ու կենցաղագէտ հիւրընկալութեամբը որ բնծայուեցաւ հանդիսականներուն : Հասոյթը՝ 900 ոսկի չափ :

Բազմութեան ելքը թատրոնէն՝ Թէփէ — Պաշի լայն պողոտային վրայ՝ առաջ կը բերէր պէսպիսութիւն մը արդուզարդերու և հոծ գնացք մը կառքերու որ զիշեր ատեն, պիտի յիշեցնէր բարեգործական մեծ պարահանդէսի մը sortie :

ՄԵՆԱՍԷՐ

ՄԱՅՐ — ԱԹՈՌԻ ԳՈՐԾԵՐ

Պագուէն Բիւզանդիոնի ուղղուած թղթակցութեանէ մը կը քաղենք հետեւեալ տեղեկութիւնները՝ Մայր Աթոռի գործերու մասին. —

«Արդէն ձեզ յայտնել էի, որ մինչև դեկտեմբերի 20ը պէտք է նոր Դանոնագիրք ստացուէր. Ռիշտ ներքին գործոց նախարար Սինոգի հետ է գրագրութիւն ունենում, իսկ Սինոգը զեկուցանում է Ն. Ս. Օծու թեան : Նոր Կանոնագիրը մնացել է առայժմ, որովհետև, ինչպէս յունուարի 27ից տեղեկութիւն էր ստացուած Ս. Էջմիածնում, եկեղեցական կալուածների խնդիրը նորից քննուելու համար մի յանձնաժողով է նշանակուել, որի նախագահն է Բեդերասպուրի և Մոսքուայի Հայոց եկեղեցիների հոգաբարձու իշխան Սիմէոն Լազարեանը. պիտի գտնուի Ս. Էջմիածին, Ն. Ս. Օծութեան ներկա, յովեամբ քննեն, և թերեւս Կանոնագիրք թողնեն նախնի գրութեան մէջ : Արդէն այդ մասին ամէն տեղ խօսուած է որ այս օրերս յանձնաժողովը կուգայ Ս. Էջմիածին, Ն. Ս. Օծութեան առողջութիւնը վերահաստատուել է, ինչ որ ուրախալի է» :

ԵՐԵՎԱՆԻ ԿՏԱԿ

Արեւելի Ուրֆայի թղթակիցը կը ծանուցանէ թէ անդացի բարեսէր տիկին մը Ս. խաթուն Բէօսէեան՝ քաղքին եկեղեցիին կտակեր է Սրուճ գաւառակին մէջ իր ունեցած 5000 զրշ. արժողութեամբ մէկ խանութը :

* * Աւասիկ մանրամասնութիւնները Մե. նասէրի յիշած կտակին : Տիգրան էֆ. Բարազամեանի երէց եղբայրը՝ Թորոս էֆ. Բարազամեան՝ փախադելով իր ծննդավայրին՝ Ստեփանի Ս. Ներսէսեան վարժարանին, որ խարխուլ վիճակ մ'առած է, և ուր աշակերտած է ինք, նպաստ մ'ընել կտակագրով մը, խնդրած է Ս. Պատրիարքէն որ թեւեան և Ստչատուրեան էֆ. ներուն յանձնարարէ կազմել այս կտակագիրը : Ն. Սրբադնութեան հրամանով Պատրիարքարանի երկու ղեւանապետները պատրաստեցին կտակագիրը զոր Բարազամեան էֆ., վկաներու ներկայութեան ստորագրեց սիրայօժար, որով կը կտակէ 1500 ոսկի Ներսէսեան վարժարանին ի հիմանէ կառուցման համար, և կտակատար կարգած է Վսեմ. Ունճեան էֆ. ան :

ՊԵՏԱԿԱՆ ՊԵՐ



I.

Կարիլ մը վրնիս . աղբիւրին եզրէն
Ձիծչ աւազանը ինկաւ մանրօրէն :
«Ո՛ւր ասանկ շուտով» բսի . անիկայ
Յած ձայնով յարեց . «Ծով կերթամ անա» :

II.

Փումայք ազգիկ մը , բայեբով անձայն
Խոյս տրաւ ինէ , Երջանք բաւ լայն :
«Ո՛ւր այդպէս արագ» : Կոյսը ժպտուն «Ա՜հ»
Ըսաւ . «Դեպ ի սէր կերթամ , նոգեմմայ» :

III.

Ամեն կողմ իրեց մռայլ լուսին ,
Եւ արձագանգը , մէջը խոր մութին .
Սուր սոյլով ծաղրով , կ'երգէր ակամայ
«Ո՛ւր պիտի երթան . դեպ ի անդարձ մահ» :

ԷՏՄՈՆ ՆԱՐՔՈՒՐ

Ազատ . Թարգմ . ՉԻՖԹԷ-ՍԱՐԱՅ

ԿԱՆԱՑԻ ՎՐԷԺ

(Ն ՈՐ Ա Վ Է Պ)



Իրիկուն էր , այն գեղեցիկ իրիկուններէն
մէկը որք Զուլցերիոյ միայն յատուկ են
կրր արեւը դեռ հազիւ կորսուած ձիւնապատ
գագաթներու ետին , երկինքը կը բոցաւառի
և խորհրդաւոր ստուերներ կը նետուին խո-
րունկ հովիտներու ծոցը :

Ամառանոցը չըջապատող անտառուկին մէջ
կը խաղար բարակ հով մը , ու եղեւիններու
անուշ բուրումն արբեցած կարծես՝ pen-
sionnaireները թե թէի իրենց երեկոյեան
պտտող կ'ընէին մեղկօրէն , ծառուղիներու
երկայնքը :

Ամէն աղբէ և ամէն հասակէ անձեր կային
անոնց մէջ , ու բոլորն ալ՝ պահ մը թողած

մեծ քաղաքներու աղմկալից միջավայրը՝
եկած էին հոն մաքուր օդ շնչելու , կաղ-
դուրուելու և մոռնալու համար պահ մը
կեանքի բոլոր հոգերը :

Եւ իրաւ , կարելի չէ երեւակայել կեանք
մը աւելի հանդատաւէտ ու աւելի հաճելի ,
քան այն դոր մարդ կը վարէ այսպիսի ա-
մառանոցներու մէջ , — գիւղաղնայութեան
հիմնալի վայրեր , ուր էդիքէդը , հարստու-
թիւնը , դիրքը կը կորսնցնեն իրենց նշանա-
կութիւնը : Ու շնորհիւ այս հանդամանքնե-
րուն , մտերմութիւնը խիստ շուտ կը հաս-
տատուի հոն այնքան ալլազան անձերու մէջ ,
և կեանքը անուշ երազի մը պէս կ'անցնի :
Ամէն ոք իր սիրած կերպով կրնայ դրօնուել
հոն , յանդուգն վերելքներու վարժուողներ՝
սպիտակահեր լեռները ունին քանի մը ժամ
հեռոն . բանաստեղծութիւն սիրողները՝ ան-
տառակներուն մէջ կ'երթան երազել . իսկ
աւելի ծոյլերը պարտէզին հովանուտ ծառե-
րուն տակ կը խօսակցին կամ կը կարդան :

Ու իրիկունը , ընթրիքի ատեն , անկա-
րագրելի աղմուկ մը կը տիրէ ճաշասրահին
մէջ , ուր բազմաթիւ լեզուներ իրարու կը
խառնուին՝ տարօրինակ ներդաշնակութիւն
մը յօրինելով :

Բայց ամէնէն աղուոր ժամերը երեկոյթ-
ներն են հոն , որոնց միջոցին զաւեշտական
արտասանութիւնները , սալօնի սրամիտ խա-
ղերը , բանայանգ ոտանաւորները իրարու կը
յաջորդեն և ասոնց բոլորէն յետոյ կուգան
պարերը , որոնք կը տեսնեն յաճախ մինչև
առաւօտ :

Այդ իրիկունը տարազաւոր պարահան դէս
(bal costumé) պիտի արուէր ամառանոցի
ընդարձակ սրահին մէջ : Այս ամթիւ չըջապա-
օթէլներէն ևս հրաւիրուած էին շատ մը ըն-
տանիքներ ու սալօնին խաղաղեցնող լոյսերուն
տակ կըսկսէին ցուցադրուիլ արդէն խայտա-
ճամուկ զգեստները :

Դաշնակին առջև՝ Սպանուհիի տարազով
խիստ գեղեցիկ կին մը ստեղծաշարին հետ
կը խաղար : Այս տիկինը երկու շաբաթ է ի
վեր արդէն կը գտնուէր հոն , բայց երբեք

կարելի չէր եղած գիտնալ թէ ո՞վ էր ան և ո՞ւրկէ կուգար: Այցելուններու տոմարին մէջ ստորագրած էր «Տիկին Վիլանի», անուն մը որ հաւանաբար չինծու պիտի ըլլար:

Սրահը լեցուն էր հիմայ. երբ դաշնակահար օրիորդը՝ տետրակները թելին տակ՝ դնաց նստիլ կըրար ակթոռին վրայ, ներս մտաւ երիտասարդ մը, ժէ. դարու ֆրանսական տարազով, որ հիանալի կերպով կը վայլէր իր նուրբ հասակին:

Երիտասարդ Ռուստիայ մըն էր, Վահրամ Տիգրանեան, գեղարուեստից ուսանող Լօղանի համալսարանին մէջ: Ամառուան արձակուրդները սկսելուն պէս՝ բաժնուած էր ան իր բոլոր բարեկամներէն ու ընկերներէն և ուղղակի հոն գացած ուր ժամանակէ մ'ի վեր կը գտնուէր արդէն իր մտածումներու առարկան, Միս Իրմա Գ...: Սկովտացի գեղեցիկ օրիորդ մը:

Շատ ուշ ճանչցած էր զայն, տարեշրջանի վերջին ամիսներուն մէջ, երբ իրիկուն մը ուսանողական երեկոյթ կը տրուէր կարօտ ընկերներու ի նպաստ: Ու իր մինչեւ այն ատեն կոյս միացող սիրտը սկսած էր բարախել այդ աղջկան համար:

Այդ առաջին հանդիպումէն վերջ, տեսած էր զայն պտոյսներու միջոցին լճին եզերքը, բայց չառ քիչ անգամ համարձակած էր խօսակցելու անոր հետ. — հակառակ իր քսաներկու գարուններուն՝ տեսակ մը մանկական սիրտ կը կրէր ան, վարանոտ և ամէկտ:

Յեղաշրջում մը տեղի ունեցած էր յանկարծ իր բնաւորութեամբ մէջ, յաճախ մեղամաղձոտ վայրկեաններ կուեննար, բան մը զոր իր ընկերները չափազանց աշխատութեան կը վերադրէին. մէկու մըն ալ մօրէն չէր տնցնէր սիրային պատճառ մը վրտուել այդ փոխախառնութեան մէջ, նկատելով որ Տիգրանեան անտարբեր եղած էր միշտ կիներու հանդէպ:

Եւ երբ որոշած էր երթալ գտնել Միս Իրման ամառանոցին մէջ՝ միտքը դրած էր հաղորդել անոր իր զգացումները, յայտնել անոր իր սէրը, որ թաքուն վշտի մը պէս կը ծանրանար իր հոգիին ու ամբողջ էութեան:

Թեանը վրայ: Բայց անգամ մը դէմ առ դէմ օրիորդին հետ՝ իր վարանումները վերսկսած էին դարձեալ. կը վախնար որ ծիծաղելի բան մը կ'ըսէր, կը վախնար որ արժանի չ'ըլլար օրիորդին, կը վախնար մանաւանդ մերժումէն, ո՛հ, մանաւանդ մերժումէն:

Այն իրիկունը երբ պարերը սկսան և ինք առաջին վալսին Միս Իրման engager ըրաւ, իր երկբայութեանց մէջ այնպէս կարծեց թէ օրիորդը քաղաքավարութեան համար միայն կ'ընդունէր իր հրաւերը: Ու Տիգրանեան պահ մը երջանիկ այդ նաղելի աղջիկը իր թեւը ունենալուն՝ այնքան շնորհալիօրէն պարեց և այնքան ոգեւորուած որ քիչ յետոյ բոլոր միւսները մէկ կողմ շարուեցան՝ միայն այդ զոյգը դիտելու համար:

Դաշնակը կեցաւ: Տիգրանեան երազէ մը սթափածի պէս՝ ցնցուեցաւ յանկարծ և Սկովտունին իր տեղը առաջնորդեց անվերջ շնորհաւորութեանց և կէցցէներու մէջ, Ու ինք՝ այս խանդավառութեանց հանդէպ անտարբեր ինկաւ ակթոռի մը վրայ, յուզումէն ընկճուած, տարտամ ժպիտով մը պատասխանելով կահանց և օրիորդներու փաղաքական խօսքերուն: Ուրիշ մը պիտի փառաւորուէր այն դարպասներէն որոնք կ'ըլլային իր շուրջը, բայց ան նեղութիւն զգաց, սրահին ալմըկալից միջավայրը ճնշեց իր հոգին, ու պահ մը առանձին երազելու համար պարտէջ իջնել ուղեց և դէպի դուռը ուղղուեցաւ:

Բայց Տիկին Վիլանի, երիտասարդին վրայ սքանչացողներէն մէկը, որ անոր բոլոր շարժումները աչքէ չէր փախցուցած՝ կանխեց զայն քոթիտի դռնէ մը և մութին մէջ ջղային թափով մը տղուն ձեռքը սեղմելով, փափաց ականջին.

— Այնքան աղուոր ըլլալ և այնքան պահ...

★ ★

Այն միջադէպերը որոնք պատահեցան պարահանդէսին յաջորդող օրերուն մէջ, յոյց տուին որ Տիկին Վիլանի զարնուած էր աղուոր հայ երիտասարդին ու ծրագիրներ կը կազմէր այդ աղան ալ ծուղակը ձգելու և կաշկանդելու այնքան ուրիշներու պէս, ու...

րոնք գեղեցիկ կիներու քմահաճոյից զոհերը կ'ըլլան միշտ: Եթէ միակ խոջնդոտ մը կար իրեն համար, ան ալ Միս Իրման էր, որուն հանդէպ երիտասարդին ունեցած համակրութիւնը չէր վրիպած այդ խորամանկ կնոջ աչքէն. բայց ինք՝ վստահ իր հրապոյրներուն վրայ՝ կը յուսար ոչնչացնել տղուն պաղ վերաբերումը և յաղթանակը տանիլ վերջապէս:

Օր մը, կէս օրէ վերջ, բոլոր pensionnaireները պտոյտի ելած, էին: Տիգրանեան իր սենեակը առանձնայած՝ նամակներ գրած էր երեք ժամ անընդհատ. ու երբ իրիկուան կողմ պարտէզ իջաւ, Տիկին Վիլանին տեսաւ հոն միս մինակ, հիանալի կերպով հագուած՝ կարծես այցելուի մը սպասելով:

— Կը կարծէի թէ դուք ալ դուրս ելած էք, Պ. Տիգրանեան, ըսաւ կինը, երբ երիտասարդը բարեւեց զինքը, բայց կը տեսնեմ որ մեր ձաշակները կը յարմարին իրարու...

— Շատ զբաղած էի, Տիկին, եւ թէեւ ոչ է ժամանակը, բայց կը խորհիմ պտոյտ մը ընել մինչեւ գետեզրը:

— Լաւ գաղափար: Սիրով կընկերանամ ձեզ, եթէ անհաճոյ չէք գտներ ընկերակցութիւնս...

— Բա՛ւ լիցի, Տիկին:

Ու ամարանոցէն դուրս ելան:

Տիկին Վիլանի շատ զուարթ կ'երեւար այդ օրը և նրբամիտ դարձուածքներով կը ջանար հետզհետէ աւելի մտերմական դարձնել սկսուած խօսակցութիւնը: Բայց Տիգրանեան՝ բոլորովին տարբեր մտածումներու մէջ խորատուգուած՝ անքաղաքավար չըլլալու համար միայն տարտամ պատասխաններ կուտար անոր:

Վարդիկեաններ կ'ըլլային ուր կը քայլէին անիոս: Ու այդ լուսթեանց յաջորդող խօսակցութեան սրամիտ դարձուածներուն տեսնելով, զորս Տիկինը կը գտնէր՝ երիտասարդը կը ցնցուէր յանկարծ ու բռնազրոյթի ժպիտ մը իր չրթներուն վրայ կը ձեւանար ակամայ:

Տիկին Վիլանի Տիգրանեանի համար դգացած արդ թաղձանքին մէջ՝ կը կարծէր թէ տղան կը չփոթէր իր ներկայութենէն և չէր համարձակէր իր զգացումներն արտայայտել:

Տիկինը՝ միւս կողմէ՝ կը յիշէր նաև երիտասարդին տաք վերաբերումը Միս Իրման հանդէպ, ու այդ մտածումը ահռելի կերպով կը ճնշէր իր հոգին:

Երբ ամարանոց վերադարձան՝ Սկովտուհին Շթրաուսի վալսերէն մէկը կը նուագէր ջութակի վրայ: Կտորը լմննալուն, շատերը դացին շնորհաւորել օրիորդը, բայց Տիգրանեան՝ ամէնէն աւելի հիացած թէեւ՝ տափակ գտաւ ուրիշներու ըրած կերպով իր սքանչացումը յայտնել, ու աթոռին վրայ դամուած մնաց, իրր թէ անտարբեր:

Ասիկա չը վրիպեցաւ Տիկին Վիլանիի նայուածքէն և գոհունակութեան ժպիտ մը փայլեցաւ դէմքին վրայ: Հաւատաց թէ Միս Իրման դերը կը վերջանար այլեւս, ու երիտասարդը կը սկսէր բռնուիլ իր հմայքներու ցանցին մէջ:

Ընթրիքէն յետոյ ամէն մարդ սովորական զբօսանքներուն տուաւ ինքզինքը: Բայց Տիգրանեան կանուխէն իր սենեակը քաշուեցաւ. օրիորդ Իրման քոտաքով գաղտագողի հանուած լուսանկարը սեղանին վրայ դրաւ, լուսամտիփին յորդ լոյսին մէջ և սկսաւ ակնապիլ դիտել զայն: Դուրսը, բաղձութեան մէջ Սկովտուհին ամէնուն հիացումին առարկայ տեսնելը սիրաւ կը ցաւցնէր, տեսակ մը նախանձ կ'արթնցնէր իր մէջ, ու կը վայրանար: Ասանկ աւելի՛ աղէկ էր:

Սրահէն՝ խօսակցութեանց, նուագներու և ծիծաղներու աղմուկը՝ կը հասնէր մինչև իրեն, սակայն ինք՝ պաշտումին մէջ խորատուգուած՝ հաղիւ կը լսէր զանոնք: Ու դիտեց այդպէս տեսակ մը երազի և վերայդումի՝ լիճակի մէջ, զոր իտէալ սէրը միայն կրնայ առաջ բերել:

Որչա՛փ ատեն անցած էր. չէր գիտեր. դուրսը ձայն ու չուկ մարած էին. ու ան կը մնար դեռ՝ ընկողմանած թիկնաթուղի մէջ, տարտամօրէն գիտակցութիւնը ունենալով իր լիճակին եւ բաղձալով այդպէս մնալ որքան ատեն որ կարելի ըլլար:

Չորս զին նայեցաւ յանկարծ. իրեն այնպէս թուած էր թէ դուռը կը դարնէին կտմացուկ մը: Սխալած ըլլալու էր. բայց

հաղիւ թէ այս խորհրդածութիւնը ըրած էր՝
զգաց որ դուռը կը բացուէր։—Ստուեր մը
ներս սպրդեցաւ ու դուռը գոցուեցաւ կրկին։
Տիգրանեան ոտքի ելաւ յանկարծ։ Գորշ մեծ
շալի մը տակէն մերկ թեւ մը դուրս ելաւ և
նուրբ մատ մը վեր բարձրանալով։

—Չճանչցա՞ք. ես եմ, Պ. Տիգրանեան։

—Խնչպէս, ըսաւ տղան յանկարծակիի
եկած. դո՛ւք, Տիկին Վիլանի, ա՞յս ատեն...

Ապահովաբար կինը այս պատասխանին
չէր սպասէր, վառն դի վրայի շալը նետելու
շարժումը կասեցուց, անոր մէջ փաթթուե-
ցաւ դարձեալ ու՝

—Կերելի թէ անհանգիստ կ'ընեմ ձեզ,
պարոն, ըսաւ. անքնութիւնս բռնեց դարձ-
եալ այս գիշեր, մատենադարանէն գիրք մը
առնել ուղեցի, բայց դուռը գոց էր. ու
անցած պահուս ձեր սենեակին մէջ լոյս
տեսնելով՝ խորհեցայ թէ դուք ալ չէիք
կրցած քնանալ, ու կրնայինք քիչ մը խո-
սելով ժամանակ անցընել. բայց քանի որ
անհանգիստ կընեմ ձեզ...

Դէպի դուռը շարժում մը ըրաւ։ Անքա-
ղաքավարութիւն պիտի ըլլար ձգել որ կին
մը այսպէս մեկնի. երկուքն ալ ոտքի վրայ
էին։

—Ո՛չ, Տիկին, ըսաւ Տիգրանեան, ան-
հանգիստ չէք ըներ զիս, միայն կը ներէք որ
դարմացայ յանկարծ զձեզ տեսնելով. նստե-
ցէք կաղաչեմ։

Տիկինը նստաւ, լոյսին մէջ, դէպի երի-
տասարդը դարձած, որ մահճակալին կրթնած
կը կենար։ Լուսնութիւն մը տիրեց, այն լուս-
նութիւններէն, որոնք որքան երկարին՝ այնքան
դժուար կ'ըլլայ խղիլը։

Տիկին Վիլանի շալը թույլօրէն ձգած էր
մէկ ուսին վրայէն, ու dentelle գիշերանոցի
մը ծակտիքներէն ճոխ լանջքի մը կաթի-
քնքշութիւնը կը տեսնուէր։ Մազերը խառ-
նուած էին, բայց այնպիսի կերպով մը որ
էն խնամոտ յարգարումէն աւելի ժամանակ
կը պահանջէր։ Տիգրանեան հեռանալէ կը
դարմանար.—այս կինը ի՞նչ կուզէր իրմէ։

—Ուսանողի կեանքը տաղտկալի բան
պէտք է ըլլայ, չէ՞, Պարոն Տիգրանեան,

ըսաւ Տիկինը քաղցրութեամբ։ Ես միշտ
մեղքեցած եմ ձեզի պէս երիտասարդները
որոնք իրենց երկրէն ու սիրելիներէն հեռու
կ'ապրին տարիներով, ուսանողութեան
համար. համակրութիւն մը ունիմ անոնց
հանդէպ, արդարաւանքէ ծնած տեսակ մը
սէր։

—Ի՛նչ, Տիկին, այնքան ալ տաղտկալի չէ
մեր կեանքը, որքան որ կը կարծէք...

—Կը հասկնամ, ձեր հասակին մէջ amour-
retteները...

—Կարելի է, բայց դէթ ինծի համար ա-
նոնց մէջ հաճոյք մը չկայ, սէրը կը հասկնամ,
իտէալ, հսկայ սէրը. բայց սիրոյ կեղծիքները,
ո՛հ, կը խորշիմ անոնցմէ։

Թեթեւ կարմրութիւն մը գունաւորեց
տիկինոջ աչտերը. ըմբոստ շարժումով մը
շալը բոլորովին նետեց վրայէն ու գլուխը
թիկնաթուին կաթնցնելով թողուց որ ժայթ-
քէ իր սքանչելի պարանոցին անդիմադրելի
հմայքը, մինչև լանջքին այն տեղը դոր գի-
շերազգեստէն բաց մնացած մասը կը ցու-
ցադրէր։

—Իրաւունք ունի, ըսաւ մեղմօրէն, ըստ
իս ալ այնպէս է. և երբ կը սիրեմ՝ կը սիրեմ։

Վահրամ դողալ սկսաւ։ Երիտասարդ
ըլլալ, զգացում ունենալ. և այդքան՝ հը-
մայքի, այդքան կախարդիչ մարմնոյ մը
աղուորութիւններուն հանդէպ անտարբեր
մնալ՝ անկարելի բան էր. Գանի մը քայլ ա-
ռաւ տղան. Տիկինը հասկցաւ թէ յաղթա-
նակած էր, և արտեւանունքները գոցեց
մեղկօրէն, սպասելով սիրուած մարմնոյն մերս
ձեցումին։

Երիտասարդը մօտեցաւ թիկնաթուին,
բայց օրիորդ Իրմաի լուսանկարին պատահե-
ցաւ աննարիւր և ցնցուկով՝ ետ ընկրկեցաւ։

Տիկին Վիլանի աչքերը բացաւ և ապշած
դիտեց տղան որ կը պտտէր սենեակին մէջ,
ու զայրոյթի հառաչանք մը արձակեց։

Լուսնութիւն մը ևս տիրեց։

Տիկինոջ զղիլիչ կիսամերկութեան ակա-
նատեա՝ Տիգրանեան յոգնեցաւ վերջապէս։

—Տիկին, ըսաւ, դողդոջ ձայնով մը,
պիտի մօիք այդպէս...

Ան կէս մը բացաւ աչքերը, իբր թէ զարմանքով չորս դին նայեցաւ, ու

— Կաղաչեմ, ըսաւ անուշութեամբ, թողէ՛ք որ քիչ մը մըքսիեմ, անուշ քուն մը եկաւ վրաս, կը ներէ՛ք հէ՞...

Երիտասարդը չկրցաւ պատասխանել, և զգալով որ այլևս անկարելի էր այդ մաշնիտող գեղեցկութեան այդպէս ականատես ըլլալ՝ մահճակալին վրայ նետուեցաւ և աչքերը փակեց։

Հինգ վայրկեանի չափ անցաւ։

Այդ միջոցին Տիկին Վիլամի՛ն քունի իբր թէ անդիտակից շարժումով մը ոտքը թիկնաթոռին եզերքը նեակց՝ և հիանալի սրունք մը ցուցադրուեցաւ՝ մտաքննէ գուլպային մէջ պարուրուած։ Իր չրթունքները կը դողային հիմայ բաղձանքի սաստկութենէն, ամէն անգամ որ իր դաղտադողի ականակը ինքնաբերականաբար դէմքին վրայ բայց չկա գիտեր ինչ մը կը կաշկանդէր զայն իր տեղը, և այդպէսով աւելի կ'արժարժէր իր վայելելու տենջը։

Տիգրանեան արտաքուստ անտարբեր կերեւար թէ և, բայց ներսը կատաղի պայքար մը մղուելու վրայ էր. իր առնական աւելանին մէջ զգլխի տենջ մը կըզգար զրկելու այդ գեղեցիկ կինը, այդ խարտեալ մաղերը, համբուրելու անոր պարանոցը, կեռաս բերանը, կարմիր այտերը, բայց Միս Իրմաի պատկերը կը գծագրուէր յանկարծ իր երեսակայութեանը մէջ և կը զսկէր ինքզինքը։

Կինը սակայն ա'լ չկրցաւ համբերել. ահաւելի բան էր այդ քանը։ Ուրբին ծայրերուն վրայ կոխելով դնաց նստիլ անկողինն եզրը և ջղային ուժգնութեամբ մը գրկեց աղանձ յուզումէն սեղ-Ռոտմ ակօաներուն մէջէն մուտաւոր։

— Այսքան աղուոր ըլլալ և այսքան ալ պաղ...

Երիտասարդը վեր նետուեցաւ և առաջին խառն շարժումով մը թեւը կնոջ մէջքին չրջանը ըրաւ և ոլրկեց զայն։

Նոյն վայրկեանին այդ մեղկ մարմնոյն ամբողջ ծանրութիւնը թուրքէն իր վրայ հակեցաւ, լանջքը բարախուն, չրթունքները

կիսաբաց, աչքերը կիսախուփ, սպասելով տարփանքի համբոյրին։ Անդիմադրելի բան էր։ Տղուն բոլոր էութիւնը կը ցնցուէր այլեւս և վայրկեան մը իր նայուածքը դամուած մնաց կնոջ թրթռացող չրթունքներուն մէջէն երեւցող ակօաներուն և կարծեց թէ ա'լ անօգուտ էր պայքարիլ։

— Այսքան աղուոր ըլլալ և այսքան ալ պաղ, մրմնջեցին կնոջ չրթունքները դարձեալ։

Տարազաւոր պարահանդէսը յիշեց յանկարծ Տիգրանեան և անոր մանրամասնութիւններուն մէջէն Օր. Իրմաի անմեղ, քնքուշ դիմագիծը եկաւ դրոշմուիլ իր աչքերուն առջեւ։ Ու այդ աղուոր պաշտուած պատկերին քով, որ հեռու և բաղձացուած կը մնար միշտ, պժգալի բան մը թուեցաւ իրեն Տիկին Վիլանիի այս ինքնամատոյց գեղեցկութիւնը։ Հետզհետէ գինքը թուլցնող վայելքի կոյր բաղձանքը առնական ոյժի մը փոխուեցաւ անմիջապէս, զինքը գրկող թեւերը քակեց, անկողնէն դուրս նետուեցաւ, մաղերը տակնուվրայ, նայուածքը մոլորուն՝ դէպ ի դուռը վաղեց, բացաւ զայն, և նըրբանցքը ցոյց տալով՝

— Կաղաչեմ... ըսաւ, ապուշ կրթած Տիկին Վիլանիի։

Կինը գունատեցաւ։ Նախատինքը սոսկալի էր։ Մոլեգին թափով մը վար ցատկեց անկողնէն. ուղեց խօսիլ՝ բայց չկրցաւ. շալը գնաց առնելու և այդ պահուն սեղանին վրայ Օր. Իրմաի լուսանկարը տեսնելով՝

— Ո՛հ, գոչեց յուսակտուր և վրէժնդիր ձայնով մը և դուրս ելաւ...

* *

Աւտու մըն էր։ Թիֆլիսի գեղեցիկ տուններէն մէկին պարտէզին մէջ երիտասարդ մը, երկայն աթոռի մը վրայ ընկողմանած կը մտածէր, մինչ դարաստանին վրայ նայող փոքրիկ սենեակէն իր քրոջ ջութակին ձայնը կուգար մինչեւ իրեն։

Տիգրանեանն էր ան. Ամարանոցի կեանքին ամենէն անուշ օրերուն մէջ, ուր բարեկամութիւնը հազիւ սկսած էր ծլիլ իր և Օր. Իրմաի միջեւ, ընտանեկան խնամ կա-

րեւոր գործեր հարկադրած էին զինքը մեկնել
անմիջապէս իր ծնողաց քով, առանց կարե-
նալ յայտնելու օրիորդին իր սէրը...

Երկու ամիս կըլլար որ մեկնած էր Զու-
ցերիաէն, ու վայրկեան մը իսկ չէր կրցած
մոռնալ Սկովտուհիին յիշատակը: Երեւակա
յութիւնը կը թռչէր միշտ դէպ ի հոն, դէպ ի
այն հեռաւոր հորիզոնը, ուր կ'ապրէր պաշ-
տուած էակը:

Ու այդ առտուն ալ ինչպէս միշտ՝ երբ
Տիգրանեան թախծոտ մտասեւեռումով մը
անցած ազուր օրերուն վերյուշումովը կը
գինովնար՝ իր քոյրը եկաւ սթափեցնել զին-
քը, ձեռքը նամակ մը բռնած:

— Զուցերիաից է գալիս, ըսաւ օրիորդը
ժպտելով:

Երիտասարդը յափշտակեց վարդագոյն հո-
տաւէտ պահարանը և բացաւ դռները:

Քոյրը ծառի մը յենած սպասեց՝ ծիծաղ-
կոտ աչքերը եղբօրը վրայ յառած:

Տղուն աչքերը երկար առեն սեւեռած
մնացին թղթին վրայ, թէև սա քանի մը
տողերը միայն գրուած էին հոն կանացի
նուրբ տառերով:

«Պարո՛ն,

«Օր. Իրմա Բ... պիտի ամուսնանայ
քանի մը օրէն Լոյանի Անդրիական հիւպա-
տոսին հետ: Գիտնալով թէ այս լուրը որ-
քա՛ն կը հետաքրքրէ Ձեզ, չուղեցի դայն
առաջին անգամ Ձեզ հաղորդելու հաճոյքէն
զրկել ինքզինքս:»

ՏԻԿԻՆ ՎԻԼԱՆԻ

Տիգրանեան ծալեց վերջապէս նամակը
և քրոջը նայեցաւ յուզուած:

— Սիրուն բաներ է գրել... Օր. Իրման,
չէ... ըսաւ աղջիկը մօտենալով:


— Այո՛... չա՛տ... պատասխանեց տղան
նամակը անոր երկարելով, ու ձայնը խեղ-
դուեցաւ կոկորդին մէջ...:

ՓԱՅԼԱԿ

ԱՐՄԷՆ ԶՐԱՎԵՍՆ

ԱՊՐԵՐ

(ԿՐՕՆԱՅԻՆ ՔԵՐԹՈՒԱՆ)



Լոյս-աբխարհիդ կըզկարումովի՛ անապակ,
Ներանձնական խրոպկներու միջոց գերի,
Թափեմ արցունք, ինչպէս արեա՛ն Դու կայլակ,
Արիւնըլայ խաչափայտիդ առ երի:

Ներանձնական խրոպկներու միջոց գերի,
Ապաւաւի սուր խայթերով կը քսւմնիմ,
Սիրսս ո՛չ խուցկի բոյր է՝ այլ ծուխ նեցնեի,
Խաւարը զիս կը հալածէ ոխերիմ:

Թափեմ արցունք, ինչպէս արեա՛ն Դու կայլակ
Յուրս քսուեցեր կը դեգերիմ հոգւոյս մէջ,
Անուշ նայուածքդ ինձ կ'երեւի գերդ փայլակ,
Զի չեմ կրցած սերդդ պահել միջոց անեց:

Արիւնըլայ խաչափայտիդ առ երի,
Թո՛ղ որ, Յիսուս, Բեզի նայիմ անքրտում,
Աչեքս գրկեմ հոգւոյդ պահեմ անքերի
Լոյս-աբխարհիդ ցոլացումովն՝ անպատում:

Արմաւ

ԵՂԻՇԷ ՎԱՐԴԱՊԵՏ

ՃԱՐՈՆԱԿԱՆ ԲԱՏԲԱՆ ՄԷ



Ճարմանակոն թատրոն մը՝ շատ զարմանալի
երեւոյթ մը ունի, թէ՛ ներսէն և թէ՛ դուր-
սէն: Բոցավառ գոյներով, արիւնը սառեցնող
ծանուցումներ սովորաբար կը զարդարեն
մուտքը, և բազմաթիւ աչքառու, չքեղ,
պղտիկ չինական լապտերներ կը կախուին
դուռին վրայ և բոլորովին, դայն հրապուրիչ
ընելու համար: Ճարմանակները սակայն շատ
պէտք չունին հրապուրիչ: Անոնք զուարճասէր
աղգ մըն են, և իրենց զուարճութեան
գլխաւոր աղբիւրներէն մէկն է թատրոնը:

Ճարմանակն թատրերգութիւնը՝ յաւէտ
երկայն բան մըն է: Ներկայացում մը սովո-
րաբար կըսկսի առտուն տասնին (10. 5)
և կը տեւէ մինչև կէս գիշեր, ի՞նչ զաւարներով
հարկաւ: Թատրոն յաճախողները նախապէս

խումբեր կը կազմեն, և կը պատրաստեն ճաշի սակաւներ, իրր թէ՛ դպրոց կամ... բաղնիք երթային: Ու այսպէս, անոնք կարող կ'ըլլան վայելել իրենց ճաշերը ա'յնքան կանոնաւորութեամբ ի'նչքան պիտի վայելէին եթէ դանուէին իրենց տունները:

Թատրոնը շատ շուայլօրէն զարդարուած է: Շէնքին պատուաւոր մասը կը նկատուի գետնայարկը, ուր կայ պարզապէս՝ հաւաքածոյ մը փայտեայ մերկ նստարաններու: Օթեակները՝ անճաշակ պղտիկ տեղեր են, որոնց զարդը կը կազմեն դարձեալ փայտեայ աթոռներ: Շէնքին օդափոխութիւնը կամ հովահարութիւնը խիստ թերի կերպով կը կատարուի, և քանի որ ծխելը արտօնուած է, թատրոնը խակ և խակ մուխով կը լեցուի խաղի միջոցին: Երկու դարմանալի սովորութիւններ կը տիրեն ճաբոնական թատրոններուն մէջ: Ունկնդիրներուն իգական մասը, իրր և կանոն՝ կը նստի էրիկ մարդերէն հեռու, և երկրորդ՝ պղտիկ գումար մը վճարելով կ'արտօնուիս ոտքի կենալ ու դիտել խաղը, հակառակ ետեւդ գտնուողներուն պատճառելիք անպատեհութեանդ:

Թատերաբեմն ալ կարգ մը մասնաւորութիւններ ունի: Երկու ծայրերէն բեմ մը կ'երկարի դէպի ժողովուրդին կեցած մասը, և երբոր ուզուի ներկայացնել ճամբորդութիւն սկսող կամ անկէ վերադարձող մէկը, դերակատարը կը դորձած է այս ցցուածքները: Թատերաբեմը հաստատուած է դարձող գլաններու վրայ, անանկ որ երբ տեսարանի փոփոխութիւն մը պէտք ըլլայ՝ կը դարձուի ամբողջը մէկէն, դերասաններն ալ մէջը ըլլալով: Կիները դեր չեն կատարեր: Կանացի դերերը կը կատարեն այրերը, որոնք յատկապէս կը պատրաստուին այդ պատճառին համար: Երբ դերասանները իրենց դերերը կ'արտասանեն՝ սպասաւորները կը լսուորեն անոնց դէմքերը, երկար եղիչներու ծայրը անցուած մոմերով:

Խաղը սկսած ատեն ժողովուրդին ուշադրութիւնը կը հրաւիրուի փոքրիկ մուրճի մը բաղիւնով: Բուն դերակատարներէն զատ՝ կան շատ մը ուրիշ անձեր, որոնք պահուած

են բեմին վրայ և որոնց պաշտօնն է խումբերգներ երգել, իրենց յատուկ երաժշտական գործիքի մը ընկերակցութեամբ: Ասոնց հանած աղմուկը կը բաւէ խլցնել օտարականի մը ականջը, բայց ճաբոնցին այդ ժխորէն ու աններդաշնակութենէն մեծ համ կ'առնէ կարծես: Դանի՝ դերասանները տաքնան իրենց դերին մէջ՝ ա'յնքան կը սաստկանայ աղմուկը, և զարմանալի երեւոյթ մը կ'ըստանայ ամբողջ շէնքը: Դերասանները կը ցատկեն կը ցատկուտեն թատրաբեմին վրայ, և խլացուցիչ ձայներ կ'արձակեն շարունակ: Ասանկ կը շարունակէ մինչև որ վերջանայ առաջին արարուածը: Դերին ներկայացումէն ո'րքան ալ դոհ կամ դժգոհ ըլլան հանդիսականները՝ բացարձակապէս կրաւորական կը մնան, ըստ որում ճարտական թատրոններու մէջ սովորութիւն չիկայ սուլելու կամ ծափահարելու:

Դադարի միջոցին դուրս կը հանուին ճաշի սակաւները, և ժողովուրդը կ'ուտէ բերած հաւկիթները, պտուղ և կամ ուրիշ չոր բաներ: Միջօրեաքի ներկայացումն ալ կ'անցնի առտուանին նման աղմուկով: Ուրիշ դադար մըն ալ—այս անգամ թէյի համար—և անա մերձակայ թէյյալահառներու սպասաւորները կ'երեւան և կը պտտցնեն թէյ, բրինձ, հաւկիթ և շաքարեղէններ, անօթի հանդիսականները կ'տացնելու համար: Երբ վերջին անգամ կը բացուի վարագոյրը, հանդիսականները դարձեալ համակ ուշադրութիւն կը դառնան, և հազիւ երբեք աչքերնին կը հեռացնեն դերակատարներէն կամ կ'ընեն ո'ր և է ուրիշ բան մը, —շարունակ ծխելով սակայն իրենց յաւիտենական ծխափողը:

Կէս գիշերուան մօտերը՝ ամէն բան լմնցած է, և հանդիսականները դուրս կը խուժին օրուան զուարճութիւնովը գինովցած, թէև յաջորդ առտուան համար ժառանգած ըլլան նաև ճաթեցնող գլխացաւ մը:

Ճաբոնցիներուն ամէնէն սիրած դերերն են մեյքսքամաթիք դէպքեր պարունակողները: Պատմական խաղերն ալ շատ ժողովրդային են, մասնաւորապէս ճաբոնական կայսրութեան հին օրերու վերաբերող դերերը:

ՆՈՐԵՐՈՒ ԲԱԺԻՆԸ

ՀԵՐԶԵՆ ԱԿՆԱՐԿՈ



Անկողնիդ չորս դին ցանցնուած՝
Ժանեակներու մէջը սիրուն՝
Տըկար մարմինդ, հիւծեալ, հալած,
Տարածուեր էր, ընկճած, նըկուն:

Ժանեակներու մէջը սիրուն,
Կըմալսք մ'էր այն կարծես անշունչ,
Ու պակսէր մոմ մը բեկքեկուն,
Աղօթելո՛ւ, հոն լուռ ու մունջ:

Կըմալսք մ'էր այն կարծես անշունչ
Տըխուր մնացորդ մը գեղէդ հին՝
Որու վկայ, մազերդ փունջ փունջ,
Ծալ ծալ բարձէդ վար թափէին:

Տըխուր մնացորդ մը գեղէդ հին,
Փոխանցման այդ վսեմ ժամուն՝
Եթէ աչերդ հուր չըլլային,
Ուր կը փայլէր դեռ սէր մ'անհուն:
Փոխանցման այդ ժամուն վսեմ,
Անոնք ինչեր, ա՛հ կ'ըսէին.
Մարած սիրոյ ողբ մը նըսեմ,
Դուցէ անէծք մը օխրազին:

ՊԱՐԷՏ

ԹԵՐԿՆԱՍՈՒՏ



Բարակ, հատած ծիրեր հեռուն կ'երկարին.
Վարդ լոյսերու ժայթքում մ'է հոծ ու նըբին.
Բժշոտ ամպի թոյլ ծուէններ, ցան ու ցիր.
Հո՛ն կը նիրհեն նուրը վերաերուն մէջ անծիր:

Ու կ'անհետի տակաւ հեռուն, ցոլքն արեւուն,
Լոյսն ալ հիմայ կ'երերտըկայ օրօրուն՝
Հալած, հատած անուրջի մը հանգունակ
Որու հուր ցոլքն տակաւ կ'ըլլայ ճեպ ճերմակ:

Հուսկ մըմունջներ, թրթռուն ծիրեր՝ լուսայեռ
Ոսկի, արծաթ դանակներ են տարուբեր,
Վերջալոյսը, յոսնահատ, ա՛լ հուսկ ճիգով
Կը նըռաղի հեւքոտ ցոլքեր ցանելով:

ԷՏԼՎԱՅՍ

ԽՄԱԳՐԱԿԱՆ ԵՐԵՐ

Մեծ — Պահֆի առթիւ Ս. Պատրիարքը կը
չարունակէ իր քարոզութիւնները՝ մայրա-
թաղաքիս գլխաւոր եկեղեցիներուն մէջ:
Կիրակի առաւօտ Սկիւտարի Ս. Խաչ եկե-
ղեցին քարոզեց, նոյն իրիկունը՝ Մայր եկե-
ղեցի, և հինգչարթի առտու Պալաթի Ս.
Հրեշտակապետ եկեղեցին: Հաւատացեալնե-
րու խումբն բազմութիւն մը ներկայ կը գըտ-
նուի և կունկնդրէ այս պերճախօս քարոզ-
ներուն որոնք կրօնային—ժողովրդական
նիւթեր կընդգրկեն:

Եփիկիոյ Ս. Կաթողիկոսը՝ մտադիր է
եղեր Տիվրիկի թեմին հոգեւոր հովուութիւնը
յանձնել Տ. Ներսէս Վրդ. Դանիէլեանի,
ղոր իր քով հրաւիրած է՝ եպիսկոպոս ձեռ-
նադրելու համար, ինչպէս կը կարդանք
Արեւելիի ուղղուած թղթակցութեան մը
մէջ:

Աղեփանդբիոյ յարսկական նորընտիր հիւ-
պատոս Միհրան Խան Գալֆայեանի նուիրուեր
է «Առիւծ և Արև» պատուանշանի առաջին
աստիճանը: Պոլսոյ պարսկական դեսպան
Միրզա Բիշա Խան, որ վերջերս Եգիպտոս
այցելեց, հիւրընկալուեր է Միհրան Խանի
ընակարանը:

Իւնիօն ապահովագր. ընկերութեան
Թուրքիոյ Բնդհ. Տնօրէն Սիմօն էֆ. Գայ-
սէրլեան, որ անձամբ Մէրսին գացած էր,
վերջին աղետալի հրդեհէն ընկերութեան
կրած մեծկակ վնասը, 200,000 ֆր.ի մօտ,
վճարելու, քաղաք հասնելուն պէս՝ երկու
օրուան մէջ կարգադրեր է ամէն հաշիւ,
ընդհանուր գոհունակութիւն պատճառելով:
Գայսէրլեան էֆ. Մէրսինէն Պէրութ ուղևո-
րեր է, պտոյտ մը կատարելու համար Սու-
րիոյ կողմերը ուր ապահովագրական մեծամեծ
չահեր ունի «Իւնիօն» ընկերութիւնը:

ԿԵԱՆՔԻ ԱՌԱՆՅ ՀԱՒԱՏՔԻ.— Ժողո-
վրդային բարոզներ:— Հեղ. Ներսէս Վարդ.
Դանիէլեան: Դին ծ զրչ: Վաճառման կեդ-
րոնատեղի՝ Պալենց դրատուն:

ՊՈԼՍԱՀԱՅ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍԱՐԳԻՍ-ԱՂԱՅԻՆ ՆՇԱՆՏՈՒՔԸ

(Վ. Լ. Պ)

5.

ԳՐԵՑ Ե. ՇԱՌԱՐՇ

Երբ սենեակէն դուրս ելնէր Էլպիս, մեծ պտրապ մը ձգած ըլլալու տպաւորութիւնը կուտար մարդուս. դէմքն ալ՝ հեռու անախորժ ըլլալէ՝ մասնաւոր հեղութիւն մը ունէր. խնդալու սիրահար, երբ քրքիջ մը արձակէր՝ այտերուն մէջ երկու խորունկ փոսիկներ կը փորուէին, ու անգամ մը որ խնդալու սկսէր, նոյն իսկ երբ այդ զուարթութեան ներքին մղումը դադրէր, իր դէմքին, նոյն իսկ ամբողջ մարմինն միտերը իրենց թրթուումը կը պահէին բաւական երկայն ատեն մը:

Սարգիս աղայի վրայ ըրած տպաւորութիւնը խորունկ եղաւ, նոյն իսկ աւելի խորունկ քան Մատիինը. ու ինչ որ կը հրճուեցնէր զինքը այն հնազանդութիւնն էր որով Էլպիս կը կատարէր իր հօրը ամէնէն պղտիկ հրամանները.

«Էլպիս, զաւաթ մը ջուր»։ — «Էլպիս, քիչ մըն ալ հաց»։ — «Ճանրմ աղջիկս, սա կաղը կը միտայ կոր, նայէ՛ տէրաւ ի՞նչ է»։ — «Մայրիկիդ հարցո՛ւ, նայինք մեզի աս պիչեր անութի՞ ձգելու միտք ունի»։

Ու ամէն անգամ Էլպիս կը շարժէր, օղի մեծ հոսանք մը գոյացնելով, ջուրը կամ հացը բերելու, լամբարին պատրոյգը կանոնաւորելու կամ խոհանոց վազելու։

Վերջապէս ճաշի հրաւիրուեցան, ու զի մայի սենեակը անցան, ճերմակ պատերով մերկ, պղտիկ սենեակ մը ուր իրր կարասի խոշորկէկ կլոր սեղան մը ու շուրջի վեց աթոռները կային։

— Պակասութիւններու աչք գոցելու է, Սարգիս էֆէնտի, կըսէր Տիկին Մըթմըթեան։

— Անանկ բաներ կըսես քի, Հոռո, թէքլիֆ ունինք Սերգիս էֆէնտիին հետ։

— Հապա՛, հաստատեց Սարգիս աղա, որ իրօք «տունէն» կը դգար ինքլինքը։

Ճաշը լուծեամբ սկսաւ. ծնունդէն, պատառաքողներու աղմուկէն զատ ձայն չկար. երբեմն կարպիս՝ սեղանին տակէն՝ կից մը կուտար իրեն քովը նստող Էլպիսին որ հաղիւ կրնար խնդուքը զսպել ու մեծ յօժարութեամբ կը փոխարինէր. իրենց յարուցած խշրառքը հաճի աղային ուշադրութիւնը գրաւեց, որմէ խոփու նայուածք մը ակնկալուած արդիւնքը ունեցաւ։ Վարդերէս աղայի ճիգերովը խօսակցութիւնը վերսկսաւ, այս անգամ Հոռոք հանրմն ալ բաւական դեր մը կը խաղար. մինակ տղաքները լուռ կը կենային. մարդ չէր խօսեր անոնց, ոչ ալ իրենց մտքէն կ'անցնէր բաւ մը արտասանել. միայն երբ կերակուրի տեսակը փոխել հարկ ըլլար, Հոռոք հանրմը նշան մը կընէր աղջկանը ու Էլպիս պնակները ժողուրտելով խոհանոց կ'երթար ու յաջորդ կերակուրը կը բերէր։

Սարգիս աղա աչքէ չէր հեռացնէր աղջիկը. Վարդերէս աղայի բառերը միշտ կը հնչէին ականջին. «Բեզի տօսանկ աղջիկ մը պէտք է»։ Անգամ մը ուղեց խօսքը անոր վրայ դարձնել.

— Մաշալլա՛հ, զաւակներդ ալ մեծցեր են, հանրմ։

Վարդերէս աղան փութաց պատասխանել.

— Էհ, աղջիկ մը տամընութը մտնայ նէ մեծցած կըսուի ես... իրաւ որ Էլպիսէն հիչ դժգոհութիւն չկնք ունեցած. ծաղիկի պէս մեծցաւ։

—Ամա Կարպիսին ձեռքէն ինչե՞ր քաշած եմ, աւելցուց Տիկինը:

Կարպիս, որ գիրութեան մասին վար չէր մնար քրոջմէն—կամ մօրմէն—կաս կարմիր կարեցաւ ու ինչ գիրք բռնելուն շուտած՝ այտերուն վրայ անթիւ պուտերուն էն խոշորը երկու մատներուն մէջ առնելով ջանաց թարախը դուրս ժայթքեցնել:

—Էլլիսը միշտ խելօք եղած է... շարունակեց Վարդերէս աղա որ առիթը չէր փախցնէր դէպ իր նպատակը քայլ մը ես առնելու համար: Ս. Խաչի վարժարանէն ամէն տարի առաջին կ'եղնար... Ազգային վարժարան ղրկած եմ, հապա՛, աւելցուց ոգեւորութեամբ, իբր թէ առարկող մը եղած ըլլար. ես անանկ ինկիլիզի ֆռանսըզի դըպրոց ղրկելու հակառակ եմ. ասոր հետ մէկտեղ, ջուրի պէս ֆռանսըզճա կ'իտէ:

—Հայրի՛կ... բողոքեց Էլլիս, բայց Կուլկուլեան միջամտեց:

—Ամէնայու ի՞նչ կայ. հայր խըսմին բարա խարճած է, Էլլիսը քէչֆ կ'ընէ ձեզի աս վիճակը տեսնելով...:

Սուրճէն անմիջապէս յետոյ, երկու աղաները նարտի սկսան, մինչ Հոռօր հանրմը խոհանոց կերթար սնանկները լուալու, և Կարպիս՝ հօրը քովէն խաղը կը դիտէր:

—Ճանըմ Էլլիս, աս բօշ է, բոօշ է, չչալե՞ս:

Վարդերէս աղան մտադիր էր աղջկան ամէն կատարելութիւնները մէջտեղ հանել:

Էլլիս անհամբերութեան ծամածռութիւն մը ըրաւ, բայց իբր խելանի աղջիկ՝ հեղաբար հարցուց.

—Reproche d'amour՞, հայրիկ:

—Հա՛, աղջիկս:

Ու նարտի ժխորը գոցելու համար կարծես, Էլլիս անապշագողորդ կտոր մը սկսաւ...:

«Սխալ խաղացիր, Սերգիս էֆէնտի, չէ՛ ու տիւ չէր. տիւ չէ՛ պէտք էիր խաղալ»։— Վարդերէս աղայի ձայնն էր, բայց իր ընկերօջ միտքը նարտէն շատ հեռու էր: Վերացական ու անորոշ գաղափար մը կը ծածանէր մտքին մէջ որուն կը ջանար concret ձեւ մը տալ, ու չկրնալուն կը զայրանար. իրեն

այնպէս կը թուէր թէ Մառիին ու Էլլիսին նկարագրին տարբերութիւնը իրենց մարմնոյ տարբերութեան հետ յարաբերութիւն մը ունէր. եթէ չեմ սխալիր, տարտամօրէն կը կարծէր թէ գէշ յատկութիւնները խոտոր կը համեմատին մտի քանակին հետ. այսինքն, աւելի պարզ ըլլալու համար, որքան նիհար ըլլայ կին մը՝ այնքան կը յատնան անոր բնաւորութեան անհաճոյ կողմերը: Մառի բարակ, ջղուտ կազմը ըմբոստութեան, բողոքի, ընդվզումի անձնաւորումը կ'ըլլար. մինչդեռ Էլլիսը՝ կակուղ, հլու, ճկուն, կռելի (նակառակ զանգուածին) էակի մը խտելը կը դառնար. Էլլիսը չէ որ, օրինակի համար, պարզապէս «Սարգիս» պիտի կոչէր զինքը՝ ինչպէս անգամ մը. իրենց նշանտուքի առաջին օրերուն մէջ Մառի յանդգնած էր ընել. Էլլիսը չէր որ կապոյտ մաթիւնէ մը հագած, թիկնաթոռի մը մէջ երկնցած, հիււանդի հովեր պիտի առնուր. Էլլիսը չէր որ... Սարգիս աղայի վերացական ու անորոշ գաղափարը այս չէր բողոքովին, բայց այնքան մշուշային էր որ վստահութիւն կը գոյացնէր թէ այսպէս պէտք էր ըլլալ: Բայց ասկէ զատ, և մանաւանդ—օղիի կամ գինիի և կամ չափազանց ուտելու արդիւնք—անօրի, նակ թմրութիւն մը, տիրացած էր իրեն, աւելի ճիշդը՝ մշուշ մը. աչքերը խաւարչովի կըսկսէին, արիւնը՝ հակառակ մարմնոյն թմրութեանը՝ աւելի արագ կը շրջէր, աւանջները կը բլղային. ակնարկը չէր կրնար զատել Էլլիսի monumental կռակէն, ու միանգամայն անսովոր տեսիլներ կ'ունենար. անձահ յամառութեամբ Հրանդի ու Լեւոնի ցերեկուան կողուտուքի պատկերը կուգար խռովել զինքը. Լեւոնի ջղային խնդուքը, Հրանդի հնդիւնը... Ի՞նչ առնչութիւն, Աստուած իմ... օղիէ՛ն էր, գինիէ՛ն էր... ու դարձեալ ցանկութիւնը ունեցաւ կործանքին վրայ, բազուկներուն մէջ սեղմելու քնքոյշ սիրայորդ էակ մը, ու Էլլիսի կռնակը երթալով խռովիչ երեւոյթ մը կ'առնուր...:

Ու յանկարծ խաղաքարերը տուփին մէջ ձգեց ու զրպանէն Մառիին ետ տուած մատներն հանելով Վարդերէս աղային յանձնեց:

— Հաճի աղա, սա մատնին առ, խըսմէթս հոս է եղեր, ըսաւ :

Վարդերէս աղա տեղէն ցատկեց և ուրախութենէն այլայլած ձայնով մը. «Հոռո՛ք, Հոռո՛ք» կանչեց :

Տիկին Մըթմըթեան, չուարած, գողցնոցը հանելու մոռցած, թաց ձեռքերով ներս վաղեց :

— Ի՞նչ կայ, ի՞նչ կայ, կը հարցնէր ահուգողով. բայց տեսնելով թէ տունը չէր բոլնկած, Վախցուցի՛ր ինձի. հիմայ ժամկոչ աղբարը եկաւ. ա՛ն պիլէ գիւահար եղաւ :

Վարդերէս աղա գլխովը լուսթիւն հրամայեց ու սպէս ճառ մը սկսաւ.

«Էլպի՛ս, աղջիկս, հոս եկո՛ւ. Սարգիս էֆէնտին, որ իմ շատ յարգելի բարեկամս է, և Աղզին էն առաջնակարգ վաճառականներէն, անցեալ կիրակի օրը քեզի տեսեր է եկեղեցին ու այնքան հաւնել է որ այսօր գացեր նշանը ետ է ուղեր ծրագեհաններէն. ասիկա մեզի մեծ պատիւ է հարկաւ... իշթէ մատնի մըն ալ բերեր է, քեզի ընծայ...» :

Հոռոք հանրմ գարմանքէն լեզուն կորսնցուց. իսկ Էլպիս առանց ըմբռնելու բռն կացութիւնը, անյազ աչքերով մատնին կը դիտէր :

— Ծնորհակալ եմ, կմկմայ ու մատը անցուց. լամբարին լոյսին տակ ապամանդը շողողաց ու աղջիկը մտածեց թէ հետեւեալ առտու կանուխ Սաթենիկին տունը պիտի վազէր ու մատնին ցցունէր. արդէն իսկ կ'երեւակայէր նախա՝ ձը անոր, որ կաղանդին հօրմէն պարզ ոսկի ապարանջան մը ստացած ըլլալուն մեծ տիկինի հովեր կ'առնէր :

Սարգիս աղա կը հիանար մանաւանդ այն ձեւին որով Վարդերէս աղա ըրած էր իր յայտարարութիւնը. ի՞նչ բաղդ որ ուրիշին չէր բացուած... Այո՛, քանի կը մտածէր, այնքան կը համոզուէր թէ ինքը ետ ուղած էր նշանը, ինքն էր որ աղջկան բռնած ընթացքէն դժգոհ խզած էր այդ կապը. ալ կրնար բաց ճակատով սպասել «հալսին ըսածին», մանաւանդ որ Վարդերէս աղայի պէս ճարտար աներ մը ունէր : Հարկաւ ծրագեհաններն ալ իրենց պատմութիւնը պիտի ընէին,

բայց ո՞վ երբեք հաւատացած է աղջկանէկողմէ զրուցուածներուն... և արդէն Սեփոնիկ աղան ալ մեղք էր, անոր ալ երեսուն ոսկիի վարկ մը պիտի բանար... :

— Հարսնիքէն վերջը Մանչէսթըր պիտի երթանք, կը բացատրէր Սարգիս աղա, բերանաբաց ընտանիքին. ու Հոռոք հանրմ աղջկանը դառնալով.

— Բաղդաւոր աղջիկին ալ ուրիշ բան է. իշթէ եւրոպա ալ պիտի տեսնաս. հարող ինձի Պուրսա պ'լէ չէ տարած :

Էլպիս ալ իր ծնողաց պէս ուրախութիւն կըզգար. իրաւ, խորունկէն շատ խորունկէն, լալու փափաք մը ունէր, բայց մասնին, հարսնիքի ու Մանչէսթըրի հեռապատկերը ժամանակ չէին ձգեր իրեն այդ ներքին ու հեռաւոր ձայնին ունկնդրելու. արդէն անոնցմէ էր որ երբեք ժամանակ չպիտի դաննէ այդ լալ ուղող խորունկ փափաքին ուշադրութիւն դարձնելու, իրենց խի՛նդն ալ լա՛ցն ալ երեսանց են. ու ո՞վ կը համարձակի ըսել թէ անոնց երջանկութիւնը ճշմարիտը չէ :

— Ձեզի բան մը ըսե՛մ, Սերգիս էֆէնտի, կ'ըսէր Մըթմըթեան, նշանուքը շատ երկարելը աղէկ բան չէ. ասանկ բաները շուտով մը ըլլալու մէջտեղէն վերջալու են :

— Երկու շարաթէն կը կարգուինք, վճուեց Սարգիս աղա :

— Բա՛ մեղայ, ձեհեղը նասը՛լ պատրաստենք պիտի... բողոքեց Տիկինը, բայց Վարդերէս աղա չթողուց որ շարունակէ.

— Երկու շարաթէն ըսաւ Սերգիս էֆէնտին. վաճառական մարդ է ան. գործը մաքինայի պէս է. ինչպէս կարգադրէ նէ՛ այնպէս պէտք է ըլլայ... :

Երբ ժամացոյցը նայեցաւ կուլկուլեան, զարմանքով տեսաւ թէ չորսը անցած էր, զսպանակէ մը մղուածի պէս ոտքի ելաւ.

— Է՛հ, դիչեր բարի. սա մտքերնուդ չէր անցներ քի խնամի պիտի ըլլայինք ա՛ :

— Աստուծով ամէն բան կ'ըլլայ, պատասխանեց Վարդերէս աղա :

— Ժամկոչ աղբա՛ր, լապտերը վառէ, պոռաց Տիկին Մըթմըթեան սենեակին դռնէն.

— Լապտերի պէտք չկայ, Հոռոք հանրմ, բողոքեց Սարգիս աղան :

—Քա մեղայ, ինչո՞ւ չըլլայ. կեղնաս
ջութուրը կը կոխես, ոտքդ կը դարձնես...

—Լուսին ալ չկայ, վրայ բերաւ էլպիս,
առանց մասնաւոր նշանակութեան:

Սարգիս աղան ինքզինքը երախտապարտ
զգաց այս դիտողութեան համար, ու երկար,
տնտնայող, պարուրող նայուածքով մը
գրկեց էլպիսի հիւթեղ մարմինը. եւ երբ սո-
վորական ողջագուրումներէ վերջ՝ լապտե-
րակից ժամկոչին ետեւէն տունէն դուրս ելաւ.

—Փառք քեզ Աստուած, բացաքանչեց
կոկորդալիր:

—Աստուած թամափին հասցնէ, ետեւէն
մութին մէջէն մաղթեց հաճի աղային ձայնը:

—Ամէն, արձագանգեց Սարգիս աղա
ջերմեռանդութեամբ:

Վ Ե Ր Զ

29 Յունուար 1904

Մանչեսթըր

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

ԲՕՐԹ-ԱՐԹՈՒՐ

Բօրթ-Արթուրը ճարտններուն կողմէ
գրաւուած ըլլալու հեռագիրը, զոր չորեք-
շաբթի օրը վերապահութեամբ հրատարակե-
ցին օրաթերթերը, չէր հաստատուած՝ մինչև
այս տողերը գրած ժամերնիս: Մարտ 22ին,
Բեզերսպուրկէ՝ պաշտօնական հեռագիր մը
կը ծանուցանէր միայն, թէ «Առջի գիշերը
ճարտնական թորփիլանաւեր Բօրթ-Արթուրի
առջեւ երեւցեր են: Ռուսական մարտանա-
ւերը և մարտկոցները սկսեր են կրակ ընել:
Առտուան դէմ ճարտնները վերստին յարձա-
կում կատարեր են ներքին նաւահանգիստին
վրայ: Արդիւնքը տակաւին յայտնի չէ»:
Բօրթ-Արթուրի վիճակին վրայ՝ ընդհանուր
կերպով՝ սա տեղեկութիւնները կը բերեն
եւրոպական թերթերը. —

«Թէպէտ քաղաքը երկու անգամ ուժ-
բակոծուեցաւ, սակայն արտաքին երեւոյթը
փոփոխում կրած չէ: Վերջին ռմբակոծու-
թիւնը շատ սաստիկ էր և ռումբերուն մե-

ծաղոյն մասը քաղաքին մէջ ինկան: Տունե-
րուն փաս չեղաւ, բայց մէկ քանի հող
մեռան: Բնակիչներն այլ ևս վարժուեցան
թնդանօթի կրակին: Ճարտնական նաւաբա-
ժինը կ'երեւայ միշտ հորիզոնին վրայ, բայց
իր ներկայութիւնը ու է ազդեցութիւն
չըներ բնակիչներուն վրայ, որոնք իրենց
սովորական ախտաութիւններով կը զբաղին:
Խանութները վերստին բացուեցան: Շատ
կիներ հոս մնացին, և մեկնողներն ալ դար-
ձան՝ վիրաւորեալները խնամելու համար:
Ռուսերը կ'աշխատին ծովեզերքի ամրու-
թեանց շինութեան: Բօրթ Արթուրի գիշե-
րային վիճակը շատ սխալ է. ամէն լոյսը
մարած են և բազմաթիւ պահակներ կը չմը-
քաղքին մէջ: Թունկուղ աւաղակներն ան-
եալ գիշեր քաղաքին մօտ տան մը վրայ
յարձակեցան, որուն մէջ կին մը կը բնակէր
առանձին. կինն յաջողեցաւ սպաննել աւա-
ղակներէն երկուքը և երրորդն ալ պահակ-
ները ձերբակալեցին: Ճարտնիք մտադիր են
քաղքիս մօտերը զօրք ցամաք հանել, բայց
կարելի չըլլար հասնալ թէ ո՞ր կէտին վրայ,
Լիաօ գետին ետեւը պահակներ դրուած են
թշնամեոյն շարժմանց հսկելու համար»:

Բէքինէն կը հեռագրեն թէ Չինու կա-
ռավարութիւնը տակաւին դոհացուցիչ պա-
տասխան մը չէ տուած Բէքինի. Ռուս դե-
պանին պահանջման՝ Մանչուրիոյ սահմանա-
դրութիւն վրայ չինական զինուորներու հա-
ձախմբմանը մասին: Չինու կառավարութեան
ընթացքը կ'սկսածելի կ'երեւայ:

* * * Երեք հազար իսաղախներ Նիւ-Չուանի
ժամաներ են թնդանօթներով և այդ տեղը
ամրացնելու համար աշխատութիւնները փու-
թով առաջ կը տարուին: Մէուլէն առեւտած
հեռագիրներու հայելով, Լիաօ-Թունկի թե-
րակղզիի հիւսիսային կողմը՝ ճակատամարտ
մը տեղի ունեցեր է, բայց մանրամասնու-
թիւն չիկայ:

Արտօգրուեալ Կ. Ս. Իիթիլիճեան

Տպագրութիւն ԱՐԵՎԵԼԻՔ Օրագրի

ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

ՏՈՒԹ. ՄԱԼԽԱՍԵԱՆ

(ՂԿՂՅԵԱԼ ԲԱՐԻՁԷ)

Մ Ա Ս Ն Ա Գ Է Ց

անանց հիւանդութեանց, մանկաբարձ, վիրաբոյժ

Բերայի դարմանատունը փոխադրած է՝ կրկին Բերա Սազըզ Աղաճ փողոց, թիւ 26, ուր հիւանդներ կ'ընդունի ամէն օր կէս օրէն վերջ ժամը 1—4 (Ը. Ե.) :

Ժամադրութեամբ՝ կէս օրէն առաջ :

Կարօտ հիւանդները կը դարմանէ Բերայի (Սր. Երբորդութեան եկեղեցւոյ) Աղքատախնամի դարմանատունը՝ ամէն հինգշաբթի՝ առաւօտէն մինչեւ կէս օր :

Մացօր. — Վիրաբուժական, ուղղա-
մարդական (orthopédique), ծննդաբե-
կան եւ ամէն կերպ արգանդի հիւանդու-
թեանց շատ կարեւոր գործողութիւնները-
ենթականերու տուններուն մէջ՝ կատար-
եալ ապահովութեամբ եւ մեծ յաջողու-
թեամբ կարենալ կատարելու համար՝ գի-
տական ամենավերջին մեթոտներու հա-
մապատասխանող կատարելագործեալ գոր-
ծիքներու մանրամասն ամբողջութիւնը
ստացուած է :

AU TALON D'OR

O ԹԱԼՈՆ Տ'ՕՐ

ԲԱՐԻՁԵԱՆ ԿՕՇԻԿՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ԳԱՌԼՕ ԱԶՆԱՄԵԱՆ

ՀԱՅ ԿՕՇԵԿԱԿԱՐ

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ

Նաեւ կողերու համար պատրաստուած

Կայաքա Վոյվոսա փողոց թիւ 103

Ճաշակաւոր ու վերջին նորաձեւութեան
համաձայն կօշիկներու յանձնարարութեան
համար, — մանաւանդ չափաւ վրայ շինուելիք,
— կ'արժէ անգամ մը այցելել սոյն վաճառա-
տունը որ ո'չ միայն իր պատրաստած կօշիկ-
ներուն ասկունութեամբը ու ճաշակաւորու-
թեամբը, այլ նաեւ գիներուն աժանու-
թեամբը առաջնակարգ կը հանդիսանայ :
Ամէն քօակներու դիւրամատչելի պատրաստ
ապրանքներ ալ ունի :

Յ Ո Ւ Շ Ա Տ Ե Տ Ր

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

1904 ՏԱՐԻՈՅ ՀԱՄԱՐ

(AGENDA INTERNATIONAL)

Թուրքերէն, Հայերէն, Ֆրանսերէն եւ Յունարէն լեզուներով

Յառաջիկայ 1904 տարւոյ համար նախորդ տարիներէն աւելի ճոխ եւ աւելի
լինամով պատրաստուած եւ արդէն հրատարակուած է

Պարզ լարակազմ	3	դր.	{ 25 օրինակէն աւելի գնող- ներուն գոհացուցիչ գեղջ
Ընկիւր լարակազմ	5	»	
ՈՍԿԵԶՈՐ ՓԱՌԱԿԱԶՄ	8	»	

Կը գտնուի Պոլսոյ եւ գաւառաց բոլոր գրավանդանոցներու եւ քրթա-
վանդանոցներու փոխ : Հրատարակիչն է

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ, ՊԱՅՊԼ ՀԱՌԻԶ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ



ՌՕՍԻԱ - ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԴԵՂ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1881 մարտ 20ի կայս. Ուլադով արտօնուած

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ շէնքը:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿԵԱՆՔԻ վրայ, եւ ՀՐԴԵՂԻ, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱԾՆԵՐՈՒ ԴԷՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈԳԵԿԱՌՔՈՎ ԵՒ ՇՈԳԵՆԱՒՈՎ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ ԱՐԿԱԾՆԵՐՈՒՆ ԴԷՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ԿԵՐՈՒԵԼՈՆ ԴԷՄ:

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած

10,666,667 Ֆրանք

Երաշխաւորութեան գումար աւելի քան

137,300,000 »

Ընկերութեան ապահովագրողներուն վճարուած դրամա-

գլուխ եւ վնասուց հատուցում

282,000,000 »

1902 տարւոյ մէջ գանձուած ապահովագին եւ տոկոս

54,000,000 »

Ամէն տեսակ տեղեկութեանց ամար դիմել կ. Պոլսոյ մասնաճիւղին, Աղարեան խան, Վոյվոտա, Ղալաթիա:

ՍՐՄԱՔԷՇԻ ԶՈՒՐ

(ՊԷՅՔՕԶ)

ԱԽՈՐԺԱՀԱՄ, ԹԵԹԵՒ ՈՒ ՕԴՏԱԿԱՐ

Սոյն հանրածանօթ աղբիւրին ջուրը, ախորժակամ եւ վճիտ, յանձնարարուած է մայրաքաղաքիս ակնաւոր բժիշկներուն կողմէ, որոնք անձամբ փորձած են անոր յատկութիւնները: Մասնաւորապէս, քիմիագէտ Պ. Բիէռ-Արէոի տարալուծած է զայն եւ թաշտէլէնի ու Գանյրգավաքի ջուրերէն գերազանցապէս լաւագոյն դասած է, ստուգելով որ անոր ջրաչափական աստիճանը 10 է եւ բնաւ ստամոքսի ծանրութիւն չիտար:

Տեղական հիւանդանոցներէն չատեր, իրենց բժշկապետներուն յանձնարարութեամբ, այս ջուրը կը գործածեն, որ ուղղակի աղբիւրէն կը բերուի ամենայն խնամքով եւ մաքրութեամբ, չիչերը ու տակառները հոն լեցուելով ու զմտաւելով:

ՍՐՄԱՔԷՇ ԶՈՒՐԻՆ գերընտիր ու անմրցելի բլլալը հաստատած են նաեւ, քիմիագէտ Տօքթ. Մաննիէ զատ հետեւեալ բժիշկները.

Տօքթ. Տօւքա փաշա (ընդհ. քննիչ առողջապահական վարչութեան) Կապուչի, Զէրրի, Սթէքուի, Ավիլիանօ, Մալլի, Միրապէլ, Բանայօթ պէյ, Պալիտիս, Բարաքովօքի, Բլէմով, Մօրթման, Տէլլասուտա Ֆայիգ փաշա եւ Սիմօնֆ:

Վաճառման կեդրոնատեղիներն են՝ ԲԵՐԱ, Մեծ-Փողօց, Հալէպ Խան, Թ. 7:— ՊՈԼԻՍ, Սիրքէնի, Պապը-Ալիի մեծ պողոտային վրայ, Թ. 34 մթերանոցը, ինչպէս նաեւ Շուկային Նոթրի Օսմանիյէի դրան կից Թ. 21 խանութը:

Սոյն մթերանոցներուն մէջ կը վաճառուի նաեւ, ՍՐՄԱՔԷՇ ջուրէն դատ, Բարաքովաքի ջուր: Դիները շատ ավելի են՝ ժողովրդեան դիւրամատելի բլլալու համար:

Փորձի համար շիշ մը գնեցէք ՍՐՄԱՔԷՇԻ ջուրէն, եւ այնքան համով ու թեթեւ պիտի գտնէք, որ վստահաբար պիտի գործածէք զայն աշուհեան:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԷՔ

ՀՄԱՅՆԱԿ ԲԱՀԱՆԱՅ ԷՔՍԷՐՃԵԱՆԻ ՏԱՐԻՔ ԱՆԽԱՐԻԿԼԵԳՈՒԻ. հասոր Ա., Դ. Տըպագրութիւն, գին 3 դհ. Կեդրոնառնդին ՄԱՐԳԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ:

ԲՐՕՅ. Ա. ԷՖ. Տ. ՅԱԿՈԲԵԱՆ, սիրուն գրքոյի մը մէջ ամփոփած է Տըք. Ուօլպըրնի քարոզները, ընթացաւորա կարգի ուղղուած: Գրքին սկիզբը կը գտնուին Տըք. Ուօլպըրնի չափ լաւ հանուած պատկերը, եւ այն գեղեցիկ քարոզը զոր խօսեցաւ իր 70 տակին առթիւ, պատմելով իր կեանքի Գին թղթակագրի 5 եւ լաթակագրի 8 զրէ: Կր ծախուի ի Պայպը, Հաւադ, Հասոյթը պիտի գործածուի բարեսիրական նպատակի:


ԳՐԻԳՈՐ ՄԱՐԳԱՐԵԱՆԻ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Պատկերազարդ, ընդարձակ Անխար-հագրութիւն. բարձրագոյն դասնթացք.— Գին 6 զրէ.

2. Պատկերազարդ Անխարագրութիւն եւ Տեղագրութիւն Կ. Պոլսոյ. Տարր. դասնթացք.— Գին 2 1/2 զրէ.

3. Պատկերազարդ Անխարագրութիւն. Միջին դասնթացք, գին 3 զրէ.

Կը գտնուին բոլոր գրաւմաճառաց քով եւ կը ծախուին գոհացուցիչ գեղղով:



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սեննայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է: Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի միանգամայն մեխանիկ կը գտնուին:

Սինկէրի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՇԱՐԲԱԿԱՆ ՄԱՍԻՍԻՐՈՒԹԻՒՆԵՐ

- | | | |
|---------|---|--|
| ԲԵՐՍ. | } | 1. Մեծ փողոց, Պօն Մառէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին՝ |
| | | 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ. | } | 1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը. |
| | | 2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | } | 1. Սուլթան Համամ, Թ. |
| | | 2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13. |
| ՍԵՐԻՏՍԸ | | 2 րդը Պօլս, Թ. 120. |

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

Կասարեալ երաւարարութիւն:

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղզուրի տունը:

ՖԵՆԻՔՍ. ՕԹՐԻՃԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (ի վիճէննա).

ՊԱՏՈՒԱԿԱԼ ՆԱԽԱԴԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ. ԴՈՒՐՍ ԼՈՒԻ ՏԷ ՊԱՎԻԷՐ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. Ընկ. բնորոշ հրդեհի եւ ծովային արկածներու (ի ՄԱՏՐԻՏ)

Ապահովագրութիւնք կը կատարուին լաւագոյն պայմաններով:

Սոյն ընկերութեանց Դրամատունն է ի. Կ. Պոլիս, Քուէքի Լիօնէ

Ընդհ. եւ լիազօր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՏԵԱՆ

Դրասենեակ, Պոլիս, Հանօբուլօ խան, Թ. 52—53—54—55—56

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԸՆԴՐԱ. ՄԵԾ ԳՈՂՈՅ ԹԻՒ 200

Կալաթա-Մէլայի Լիսէին դ'մ

ԳԵ. ԵԵ. ՇԲ. օրերը առաւօտեան կանու-

խեն մինչեւ իրիկուան ժ. 11 1/2

ԲԵ. ԳԵ. ՈՒՐ. օրերը ճէն մինչեւ 11 1/2

Երեւոյի օրերը ժամադրութեամբ

ՋՄՐԱՆ ԱՌԹԻԻ

Գնեցէք Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ եւ Յ. ԻՍԱ-
ԴՈՒԼԵԱՆԻ՝ Զինաստանէն, Հնդկաստանէն,
Ճաւայէն եւ Սէյլանէն ուղղակի բերել տուած
բարձր, հոսաւեհ եւ առողջաբար թէյերէն,
որոնք ձմրան եղանակին յարմարագոյն ըմ-
պելիննի:

Միշտ ուշադրութիւն մեր
վաճառանիչին:

Կ. Պոլիս, Պահճէ Դափու,
Ճէլալ պէյ խան, Թիւ 10:

Մասնաճիւղեր Թուրքիոյ
Գլխաւոր քաղաքներուն մէջ,
նոյնպէս Եգիպտոս:



ՏՕՔ. Ն. ՏԱՂԱԻԱՐԵԱՆԻ ԳՈՐԾԵՐԸ

դր.

Գիտական շարժում	Բ. տարի (188)	20
» » »	Գ. » (1887)	20
Բնական Պատմութիւն Ա. հատոր (Կեդ.		
Հիւսուածաբանութիւն եւ Մարդկային		
Կազմախօսութիւն ու Բնախօսութ. Դա-		
սազիրք երկրորդական վարժարանաց		40
Նախորդին համառօտը: Դասագիրք Նա-		
խակրթարանաց		8
Ծագումն հայ տառից (Պատկեր իզմիր-		
եանց մրցանակաւ)		10
Մանրէաբանութիւն		10
Տիեզերք եւ իւր կազմութիւնը (Ֆրանս)		10
Առողջապահութիւն		25
Ծննդական Դործարանք (Կազմախօսու-		
թիւն, Բնախօսութիւն եւ Առողջապահութ.		6
Մարդկային Սաղմնախօսութիւն		5
Բառացուց օկ Ախտանուանց, Բ. Տիպ.		3
Տարուինականութիւն, Գ. Տիպ.		3

Կեդրոնացեղին է

Մատենական Տպարան, Ֆիննանճըլար, Կ. Պոլիս